



ՓՈՔՐ

ՈՉ ԲԼՈԿԱՅԻՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

* * * * *

ԳԳ ԱՁԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ

ԳԱՅԵՃԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՃՈՒՄՆԵՐ

2023
ՎԱՆԱԳՈՐ

Էդուարդ Աբրահամյան - միջազգային հարաբերությունների մասնագետ

Արմինե Մարգարյան - ռազմաքաղաքական հարցերով փորձագետ

Արեգ Քոչինյան - անվտանգային քաղաքականության փորձագետ

Ալբերտ Ներզէթյան - անվտանգային քաղաքականության փորձագետ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից, ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվող հետազոտությունը Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված նախորդ հետազոտությունների տրամաբանական շարունակությունն է և նպատակ ունի առաջ մղելու և որպես հանրային քննարկման թեմա խրախուսելու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: ՀԲԱ Վանաձորի գրասենյակը, որպես իրավապաշտպան կազմակերպություն, ելնում է այն սկզբունքից, որ անվտանգությունը և մարդու իրավունքներն անքակտելի են, կազմում են մեկ ամբողջություն և առանց ժողովրդավարական կառավարման մեխանիզմների՝ հաշվետու և թափանցիկ կառավարում, արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն, իրավունքի գերակայության սկզբունք (մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ և վստահելի մեխանիզմներ և այլն), չի կարող երաշխավորված լինել պետության և նրա քաղաքացիների արդյունավետ, շարունակական անվտանգությունը:

Ադրբեջանի կողմից սանձազերծած 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները ցույց տվեցին հենց վերը շարադրված մեխանիզմների բացակայության ազդեցությունը: 2018 թ. թավշյա հեղափոխությունից հետո ընդամենը երկու տարի անց սանձազերծված պատերազմին դիմագրավելու համար նոր իշխանությունները ապավինեցին նախորդ՝ պետության գավթման ժամանակաշրջանում ձևավորված անվտանգային համակարգին, որը բնականաբար չկարողացավ ապահովել արդյունավետ հակազդում անվտանգային մարտահրավերներին: Չնայած պետք է հիշեցնել, որ դեռևս 2016 թ. ապրիլին քառօրյա պատերազմը ցույց էր տվել համակարգային կոռուպցիայի կառավարման տարիներին ձևավորված պաշտպանական համակարգի անարդյունավետությունը, սակայն անգամ այդ հանգամանքը պատշաճ չգնահատվեց նոր իշխանությունների կողմից: Հարկ է նշել, որ ապրիլյան պատերազմի հանգամանքների ուսումնասիրության նպատակով 2019 թ. մայիսին ստեղծված ՀՀ Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի զեկույցը ավարտվեց միայն 2021թ-ին՝ դարաբաղյան երկրորդ պատերազմից հետո:

Փաստ է, որ 2020 թվականի օգոստոսին Անվտանգության խորհրդի նիստում հավանության արժանացած ՀՀ անվտանգության երկրորդ ռազմավարությունը չի կարող հիմք հանդիսանալ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո ի հայտ եկած նոր մարտահրավերների կանխման և դիմագրավման, ինչպես նաև համակարգային փոփոխություններ կատարելու համար: Ավելին, ազգային անվտանգության երկրորդ ռազմավարությունը նույնիսկ չունի պատասխաններ թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության համակարգային բազմաթիվ նոր խնդիրներին, որոնք որպես մարտահրավերներ սպառնում են թե՛ Հայաստանի Հանրապետության, և թե՛ Արցախի գոյությանը:

Փորձագետների խումբը, որին ներգրավել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներկայացվող հետազոտության իրականացման համար, արդեն իսկ մեկ հետազոտություն ներկայացրել է հանրությանը¹: Հիշատակված հետազոտությամբ ցույց է տրվել ՀԱՊԿ-ի և որոշ չափով ԵԱՏՄ-ի սահմանափակող ազդեցությունը ՀՀ ներկա անվտանգային խնդիրների լուծման վրա և անվտանգության ապահովման համար, ինչպես նաև ռազմավարական համագործակցության հնարավորությունները ոչ բլոկային պետության կարգավիճակ ձեռք բերելու դեպքում: Աշխատության մեջ մի շարք հայեցակարգային մոտեցումներ են ձևակերպված ազգային անվտանգության նոր մշակվելիք ռազմավարության համատեքստում՝ արտաքին քաղաքականության, տարածաշրջանային մակարդակում, կիրեռանվտանգության և ներքին ռեսուրսների կառավարման ուղղություններով: Փորձագիտական խումբը չի տվել բոլոր հարցերի վերջնական պատասխանները, ավելին, խմբի առջև նման նպատակ չէր էլ դրվել, քանի որ ազգային անվտանգության ռազմավարության մշակումը պահանջում է շատ ավելի մեծ ռեսուրսների ներդրում՝ պետական մարմինների, գերատեսչությունների, ավելի մեծ թվով ու տարբեր բնագավառների փորձագետների և քաղհասարակության ներկայացուցիչների ներգրավում: Բայց հետազոտության իրականացման ընթացքում բազմաթիվ քննարկումների արդյունքում փորձագետների հետ եկանք այն որոշմանը, որ պետք է նախ հիմնավորել և ներկայացնել մոտեցումներ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգային հենքի վերաբերյալ: Քննարկումների կարևոր արդյունք է հանդիսանում այն, որ մինչ ազգային անվտանգության ռազմավարության մշակումը, նախ և առաջ կարևոր է մշակել եւ սահմանել Ազգային անվտանգության ռազմավարության համար հիմք հանդիսացող հայեցակարգային մոտեցումները, և ներկայացվող հետազոտությունը ուղղված է հենց այդ հայեցակարգային բովանդակության բացմանը, այնպիսի բովանդակային խնդիրների ձևակերպմանն ու դրանց լուծման ճանապարհներին:

Ներկայացվող հետազոտության մյուս կարևոր արդյունքն այն է, որ ի շարունակություն նախկին հետազոտությունների, սա ևս մեկ քայլ է ՀՀ-ի՝ որպես փոքր պետության ազգային անվտանգության հայեցակարգային մոտեցումների մշակման ուղղությամբ՝ ոչ բլոկային պետության կարգավիճակում:

Ուկրաինայի դեմ Ռուսաստանի Դաշնության սանձազերծած պատերազմը մարտահրավեր էր ոչ միայն միջազգային իրավունքին և երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված միջազգային անվտանգային համակարգին, այլ հատկապես փոքր պետությունների անվտանգությանը, եթե ոչ՝ գոյատևմանը: Եթե Ֆինլանդիայի և Շվեդիայի նման պետությունները, երկար տարիներ լինելով ոչ բլոկային պետություններ, իրենց անվտանգության ապահովման համար որոշեցին անդամագրվել ՆԱՏՕ-ին, ապա դա միայն իրենց ոչ բլոկային պետություն լինելու

¹ <https://hcav.am/the-restrictions-of-the-ra-security-system-and-the-possibilities-of-overcoming-them/>

շնորհիվ, որը հնարավորություն տվեց դրսևորելու փոքր պետությանը բնորոշ ճկունություն և մանրականություն իրենց անվտանգային խնդիրները լուծելու համար: Ինչպես ցույց է տվել նախորդ հետազոտությունը, ՀԱՊԿ ռազմական բլոկի անդամ լինելը զրկում է ՀՀ-ին մանրականությունից և ճկունությունից իր անվտանգային խնդիրները լուծելու համար: Եվ եթե Ուկրաինայի պարագայում ՆԱՏՕ-ին անդամակցելն ունի ողջամիտ հիմնավորումներ իր անվտանգային խնդիրների լուծման նպատակով, ապա հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակ լինելը և բևեռացված նոր աշխարհաքաղաքական իրավիճակում անվտանգային խնդիրների լուծման հրամայականը՝ ՀՀ-ի համար արդյունավետ կարող է լինել ոչ բլոկային պետության կարգավիճակ ձեռք բերելը:

Ներկայացնելով փորձագետների աշխատանքը, ակնկալում ենք նաև դիտարկումներ, քննարկումներ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նոր ռազմավարության, նրա հայեցակարգային հենքի ուղղությամբ ամենատարբեր մասանգեղների, փորձագետների, պետական մարմինների, քաղաքական ուժերի կողմից:

Արթուր Սաքունց
ՀԲԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

ԷԴՈՒԱՐԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



Հեղինակ՝ Էդուարդ Աբրահամյան, պ.գ.թ., բրիտանական
Լեսթերի Համալսարանի դոկտոր:

2019-2021 թթ. ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանի արտաքին հարցերով օգնական: Մասնագիտական ոլորտը. փոքր պետությունների արտաքին քաղաքականություն և ռազմավարական ադապտացիա: Աբրահամյանի առանձնահատուկ ուշադրությանն է արժանանում փոքր պետությունների ասիմետրիկ փոխհարաբերությունները միջին և մեծ պետությունների հետ և այդ փոխհարաբերությունների արտացոլումն ու ազդեցությունը միջազգային հարաբերությունների բևեռայնացման վրա:

Twitter: @abrahamyan13 ; email: ea269@le.ac.uk

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԲԱՑԱՅԱՅՏԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ելներով տվյալ աշխատության նպատակներից և առանձնահատկություններից՝ անհրաժեշտ է հստակեցնել այն չափանիշները, թե «փոքր պետության» որ սահմանումն է առավել համապատասխանում ազգային անվտանգության ռազմավարությանը վերաբերող հետազոտություններին: Այս պարագայում ելակետային պետք է համարել ոչ թե պետության ֆիզիկական չափանիշները (*ceteris paribus*), զուտ աշխարհագրական հատկանիշներն ու նյութական/շոշափելի ուժային կարողությունները, այլ պետության «փոքրության» չափման հարաբերականության փոփոխական մեծությունը: Սա նշանակում է նախապատվությունը տալ փոքր պետության այն չափանիշին, որը գործ ունի հետազոտության առարկա հանդիսացող երկրի ինքնաընկալման, վարքագծային ինքնադրսևորման և ինքնադիրքավորման հետ՝ իր իսկ ռազմավարական միջավայրում: Այլ կերպ ասած՝ այս աշխատությունը հիմնվում է այն մասնագիտական գրականության վրա, որը պետության «փոքր» լինելը դիտարկում է ոչ թե վերջինիս ֆիզիկական պարամետրերի շրջանակում, այլ նախ որքանով է տվյալ երկիրն իրեն *զգում* և *գործում* որպես փոքր պետություն՝ ելենով իր միջավայրային առանձնահատկություններից:

Երբ հանդես ենք գալիս այս ելակետային դիրքերից, «*ի նչպիսի փոքր պետության հետ գործ ունենք*» հարցադրումը կապվում է տվյալ երկրի քաղաքական էլիտայի և

հանրության քաղաքական հասունության հետ, այն է՝ արդյոք այն ունակ է հասկանալ և իրականացնել երկրի աշխարհագրական դիրքի և աշխարհաքաղաքական դիրքավորման վրա հիմնված ռազմավարական պլանավորում՝ միտված նյութական ու մտավոր ռեսուրսների դասական մտածելակերպից դուրս առավել արդյունավետ օգտագործմանը: Անվտանգային (գոյաբանական), տնտեսական և միջազգային հարաբերություններում փոքր պետության տեսանելի ազդեցություն ունենալու խնդիրները լուծվում են հենց ոչ դասական լուծումների շնորհիվ, ինչն ապացուցվում է Իսրայելի, Էստոնիայի, Մինգապուրի, Թայվանի, ՄԱԷ-ի, Ադրբեջանի, Քաթարի, Ֆինլանդիայի, Դանիայի, Ռուանդայի, Ուրուգվայի և այլ հաջողակ փոքր պետությունների օրինակով: Սույն պետություններին հաջողվել է ոչ դասական լուծումների միջոցով ձևավորել հավակնոտ օրակարգեր, ամրապնդել տարբերակվող շահեր ձևավորելու իրենց ունակությանները և դրանք առաջ մղելու կամքը:

Այլ կերպ ասած, պետության «փոքրությունը» մենք դիտարկում ենք ոչ միայն որպես սոցիալական կոնստրուկտ, այլ որպես համապատասխան վարքագծային առանձնահատկություն: Այն ձևակերպված է տվյալ պետության էլիտա-հանրություն կոնսենսուսային ընտրության վրա, այն է՝ ընտրություն յուր միջավայրում օրակարգ ձևավորող և ազդեցություն/ուժ պրոյեկտող քաղաքական ակտոր հանդիսանալու հավակնության կամ որպես այլ ակտոր «օրենք վերցնող» (*rule-taker*) պետության և նրա շահն ու օրակարգը սպասարկողի (*client state*) միջև: Նմանատիպ ընտրության առանցքային արտացոլանքը տվյալ փոքր պետության տարբեր ժամանակահատվածներում որդեգրած ռազմավարությունն է, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս պնդելու, որ իր քաղաքական պատմության ընթացքում այն կարող է փոխել իր կարգվիճակը միջազգային հարաբերությունների պետությունների հիերարխիայում: Պատկերավոր ասած՝ պետությունը կարող է դառնալ քաղաքականապես էլ ավելի փոքր, օրինակ՝ գաճաճ պետություն (*Micro-state*), կամ նվազեցնել իր փոքրության քաղաքական աստիճանը՝ իր իսկ անմիջական միջավայրում իրեն դիրքավորել որպես փոքր ուժ (*Small Power*): Այսպիսով, համապատասխան վարքագծի և դերի ընտրությունը հետազոտողին հնարավորություն է տալիս տվյալ խնդրո առարկա փոքր պետությանը տալ համապատասխան որակային կոնցեպտուալիզացիա:

Գիտությանը հայտնի է մի քանի դեպք, երբ փոքր պետությունը չի ունենում հայտարարված պետական ռազմավարություն: Տեսականորեն, անվտանգային ռազմավարությունը «կարող է չկարևորվել փոքր պետության կողմից այն պարագայում, երբ վերջինս գտնվում է սպառնալիքի ակնհայտ աղբյուրներից զերծ աշխարհաքաղաքական բարենպաստ և կայուն անվտանգային միջավայրում կամ որի պետական ինստիտուտներն ունեն արդյունավետության այնպիսի մակարդակ, որը թույլ է տալիս խնդրի կամ մարտահրավերի առաջացման դեպքում դրսևորել արագ

ինստիտուցիոնալ արձագանքման ունակություններ»²: Այդպիսի փոքր երկրների շարքին են պատկանում, օրինակ, Իսլանդիան, Սլովենիան, Տրինիդադ-Տոբագոն կամ Նեպալը կամ օրինակ՝ Պորտուգալիան և Իռլանդիան, որոնք ավանդաբար չեն զգացել համապարփակ ազգային անվտանգության ռազմավարության կարիք: Սակայն միջազգային հարաբերությունների հակամարտային ու մրցակցային բազմաբևեռ համակարգի ձևավորման պարագայում 2022 թ-ից առաջին անգամ այս երկու փոքր պետությունները սկսել են կարևորություն տալ սեփական ազգային անվտանգության ռազմավարության ստեղծմանը՝ ընդգծելով ազգային պաշտպանության գորակոչային կամ հիբրիդային մեխանիզմին վերադառնալու իրենց հավանականությունները:

Բացի այդ, քաղաքական քարտեզի վրա հայտնի են մի շարք գաճաճ պետություններ, որոնց «ռազմավարությունն է չունենալ ռազմավարություն»³: Այսպիսի գաճաճ պետությունների քաղաքական առանձնահատկությունն է «արձագանքել ըստ իրավիճակի», որն իրենց պետական ռեսուրսի սահմանափակության և իրենց միջավայրում ազդեցություն պրոյեկտելու ունակության բացակայության կամ կարիքի բացակայության պարագայում համարվում է «ռացիոնալ ընտրություն»⁴: Այդպիսիներից են, օրինակ, Անդորրան, Լյուքսեմբուրգը, Մոնակոն, Սեյշելները, Պարագվայը, Բութանը և այլն: Վերջին երկուսն ունեն զարգացման պլան, բայց չունեն անվտանգային ռազմավարություն:

Կան մի շարք փոքր պետություններ, որոնք ազգային անվտանգության ռազմավարության ընդունումը կամ թարմացումն ըստ անվտանգային միջավայրի փոփոխության համարում են ոչ նպատակահարմար՝ դրանց կամ պրակտիկ դիսֆունկցիոնալության կամ էլ արհեստական նշանակության պատճառով: Նման դիրքորոշումը բխում է այդ փոքր պետությունների ներքին կառավարման համակարգերի առանձնահատկություններից, օրինակ՝ անձնակենտրոն ռեժիմների (օրինակ) և/կամ պետական ինստիտուտների չկայացվածության, և/կամ դրանց ինտեր-ռեակցիոն լինելու հանգամանքներից: Տարբեր ժամանակներում սույն հանգամանքներից մեկը կամ բոլորը միասին դրսևորվել են Շևարդնաձեյի ժամանակաշրջանի Վրաստանում, ներկայիս Հյուսիսային Կորեայում, Թուրքմենստանում, Մոլդովայում, Կուբայում, Սուդանում, Բելառուսում, Տաջիկստանում, Բոուներում, Բահրեյնում և մասամբ Ադրբեյջանում և Հայաստանում:

Դասակարգման համաձայն՝ բացի մանտնանշաճ առանձնահատկություններից, մնացած փոքր պետությունները, որպես կանոն, ունենում են հայտարարված ազգային անվտանգության ռազմավարություններ: Որոշ փոքր պետություններ, ելնելով իրենց անվտանգային բարդ միջավայրից և կամ իրենց միջավայրում ուժային, տնտեսական և

² Bailes, A. JK. 2009. *Does a small state need a strategy?* Paper presented in the Annual Convention of the International Studies Association. P. 6.

³ Ingebritsen, C., Neumann, I., Gsthöhl, S. & Beyer, J. 2006. *Small States in International Relations*. Reykjavik: University of Iceland Press.

⁴ Barson, R. P., 1973. *The Other Powers: Studies in the Foreign Policies of Small States*. New York: Harper & Row Publishers, Inc.; Thorhallsson, B. & Steinsson, S. 2017. *Small State Foreign Policy*. In: *Oxford Research Encyclopedia of Politics*. Oxford: Oxford University Press.

ազդեցություն պրոյեկտելու հավակնություններից, ունենում են նաև խորքային ռազմավարություններ⁵:

Հայտարարված ռազմավարությունը (*declared strategy*) ենթադրում է պետական ռազմավարական փաստաթղթ, որն անցել է համապատասխան պետական ինստիտուցիոնալ հաստատման ընթացակարգերով և պաշտոնապես հրապարակվել է բաց աղբյուրներում, պաշտոնական կայքերում: Այն իր մեջ պարունակում է տվյալ փոքր պետության իր իսկ միջավայրային առանձնահատկությունների գնահատականը՝ անվտանգային տեսանկյունից: Այն, որպես կանոն, պարունակում է ազգային/ինստիտուցիոնալ խնդիրների և առաջնահերթությունների, ինչպես նաև գերակա շահերի հայտարարում: Փաստաթղթի գործնական նպատակը պետության բոլոր ներքին դերակատարների (պետական մարմիններ, քաղաքական կուսակցություններ, ՋՈւ, նույնիսկ մասնավոր սեկտոր) արդյունավետ կոորդինացիան և գործունեության ուղղորդումն է՝ զժված ռազմավարական ծիրին մեջ:

Հատկանշական է, որ Սառը պատերազմից հետո մի շարք պետությունների ռազմավարության դեկլարատիվ ընդունումը համարվում էր նոր ԱՄՆ գերակայության վրա խարսխված լիբերալ աշխարհակարգի նորմերի և պայմանների փաստացի ընդունում: Այն ենթադրում էր բոլոր պետությունների համադրելի կամ միմյանց չհակադրվող աշխարհընկալումներ, օրինակ՝ լիբերալ դեմոկրատական օրենքի վրա խարսխված միջազգային հարաբերությունների պայմանների ընդունում, որի տրամաբանությունը, որպես կանոն, արտացոլվում էր երկրների հաճախ դեկլարատիվ նշանակություն ունեցող անվտանգության ռազմավարության տեքստերում⁶: Բացի այդ, զուտ ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթի ընդունումը 1990-2000 թվականներին որպես այդպիսին համարվում էր պետության և պետական ինստիտուտների կայացման կարևոր արտաքին ցուցիչ⁷, որը սակայն հաճախ կտրված էր լինում տվյալ երկրի իրական արտաքին կամ ներքին անվտանգային առաջնահերթությունների սպասարկման անհրաժեշտություններից⁸:

Խորքային ռազմավարությունը (*Deep strategy*), ի տարբերություն հաճախ «ցուցադրություն ենթադրող» հայտարարված ռազմավարությունների, ունենում է պետության «իր իսկ համար» ընդունված ռազմավարական ձեռնարկի նշանակություն: Խորքային ռազմավարությունը, որպես կանոն, ունենում է համապատասխան գաղտնիության աստիճան կամ բաղկացած է լինում մի քանի գաղտնի փաստաթղթերից, որոնք ենթադրում են ապագային միտված, շոշափելի/չափելի վերջնաարդյունք ենթադրող և միմյանցից բխող տարաբնույթ քաղաքական, տնտեսական և/կամ

⁵ Bailes, A. JK, 2009, *Նշված աղբյուր*:

⁶ Edström, H., Gyllensporre, D. & Westberg, J. 2019. *External Shocks and the Responses of Small States*. Abingdon: Routledge.

⁷ Bailes, A. J., Rickli, J.-M. & Thorhallsson, B. 2014. Small States, Survival and Strategy. In: C. Archer, A. J. Bailes & A. Wivel, eds. *Small States and International Security*. New York: Routledge, pp. 26-45.

⁸ **Նույն տեղում:**

ռազմաքաղաքականության գործողությունների, քայլերի և գործառույթների պլանավորված շարք: Ի տարբերություն հայտարարված ռազմավարության՝ խորքային ռազմավարությունը ծառայում է փոքր պետության «իրական ռազմավարական նպատակի» սպասարկմանը: Ըստ մասնագիտական գրականության՝ ռազմավարության «խորքայնությունը» ընդգծում է «ազգի ռազմավարության չհայտարարագրված կամ ինտուիտիվ առանձնահատկությունը, որը կարող է ուղղորդվել հանրության լայն շերտերի համընդհանուր տեսլականով կամ դիրքորոշմամբ, կամ մնալ զուտ էլիտաների (ընտրանի) ռազմավարական պլանավորման սահմաններում»⁹: Խորքային ռազմավարությունները, ըստ էության, ենթադրում են սցենարային իրավիճակների մշակման, այդ սցենարներին համապատասխան արձագանքելու, ՋՈւ կամ պետական ողջ համակարգի արագ արձագանքման պլաններ և ուղենիշեր, որոնց հետևողական համապարփակ նախապատրաստությունն ու վերջնական ռազմավարական նպատակը դասակարգվում է որպես գաղտնի:

Համաձայն մասնագիտական գրականության կամ փորձագիտական տեղեկատվության՝ ավանդաբար խորքային ռազմավարություններ են ունեցել կամ ունեն Իսրայելը¹⁰, Թայվանը, Շվեյցարիան և Ֆինլանդիան: Նոր սերնդի փոքր պետություններից, որոնք ամենայն հավանականությամբ կիրառում են խորքային ռազմավարություն, հանդիսանում է Վրաստանը (հավանաբար սկսած 2010-2012թթ.-ից), Էստոնիան (հավանաբար 2010 թ.-ից) և Ադրբեյջանը (ըստ որոշ տվյալների՝ առաջին անգամ քննվել է 2014թ. երկրորդ կեսին, և թարմացվել 2021թ. ընթացքում):

Եթե դիտարկենք խորքային ռազմավարություն դասակարգումը Իսրայելի օրինակով, ապա այն ենթադրում է փաստաթուղթ կամ փաստաթղթերի շարք, որոնք կարող են պարունակել հայրենակիցների շարունակական հայրենադարձության, իրենց համար ենթակառուցվածքների ստեղծման և նրանց նատուրալիզացիայի ծրագիր-գործընթաց: Ադրբեյջանի օրինակով եթե դիտարկենք՝ խորքային ռազմավարությունը ենթադրում է օրակարգում համապատասխան ռազմական, ռազմաքաղաքական գործողություններ սկսելու ներքին ռազմական, տնտեսական, հանրային (ներ)ուժի կուտակման/ակումուլացիայի հետևողական համալիր-համապարփակ ծրագիր-գործընթաց: Քաթարի պարագայում այն ենթադրում է սպառող տերությունների էներգետիկ քաղաքականության վրա ներազդելու ռազմավարություն, այն է՝ իր գեոտնտեսական հեղինակության բարձրացման պլան-գործընթաց: Էստոնիայի ու Սինգապուրի պարագայում այն ենթադրում է ռազմական տեխնոլոգիաների առաջատարության և մի շարք ոլորտներում համաշխարհային

⁹ Baldacchino, G. & Wivel, A. 2020. *Small States: concepts and theories*. In: Baldacchino, G. & Wivel, A. eds. *Handbook on the Politics of Small States*. s.l.:Edward Elgar Publishing, pp. 2-19.

¹⁰ Rodman, D. 1995, *Regime-Targeting: a Strategy for Israel*, *Israel Affairs Journal*, Volume 2, Issue 1, p. 153-167.

ճանաչելիության (եթե ոչ գերակայության) հասնելու պլան-գործընթաց պարունակող խորքային ռազմավարություն:

Փոքր պետության խորքային ռազմավարության պլանավորումը տեսականորեն կարող է ներառել տվյալ պետության ռազմավարական-տարածաշրջանային միջավայրում առկա ուժային բալանսի կոնֆիգուրացիայում կոնվենցիոն կամ ոչ դասական մեթոդով գերակայության հասնելու և/կամ ներքին ռեսուրսի վրա հիմնված պաշտպանական-անվտանգային մշակված մի շարք սցենարների գաղտնի պատրաստվելու համապատասխան ուղղեցույց/գործընթաց: Բացի այդ, այն կարող է ներառել նաև ներքին ազգային դիմակայունությունը բարձրացնող ռազմավարական պլանավորում, որը ենթադրում է ռազմավարական ենթակառուցվածքների, պարենի անվտանգության, նյութական և մտավոր ռեսուրսների կառավարման մոնոպոլ հնարավորության հետևողական գործընթաց՝ արտաքին ուժի, հարևան երկրների ազդեցությունը սեփական վարքագծի վրա չեզոքացնելու նպատակով:

Ռազմավարության երկատվությունը՝ հայտարարված և խորքային, փոքր պետության առանձնահատուկ ռազմավարական և քաղաքական մշակույթի դրսևորման արտացոլանք է: Այն ենթադրում է կառավարող էլիտայի կամ միմյանց փոխարինող էլիտաների պետական շահի բարձր գիտակցության և պետական զարգացման ժառանգականություն ապահովող տեսլականի պրակտիկ իրականացման ճանապարհային քարտեզ: Այն ներառում է դեպի ապագան միտված ռազմավարական պլանավորման հստակ ձևակերպված դրույթներ, դրանց իրականացման ընթացքն ու արդյունավետությունը չափող հստակ միավորներ, որոնք ռազմավարական իմաստով ենթադրում են տվյալ պետության իր ռազմավարական միջավայրում միջնաժամկետ և երկարաժամկետ դիրքավորման տեսլականի պրոյեկտավորում և իմպլեմենտացիա՝ հենվելով ռազմավարական տեսլականի գաղափարական շարունակականության վրա:

Ներկայիս աշխատությունը վերաբերում է հայտարարված ռազմավարության դրույթների, առաջնահերթությունների և դրանից բխող պետական շահի ձևավորման և սպասարկման ձևակերպմանը՝ հենվելով միջազգային հարաբերությունների՝ փոքր պետությունների վերլուծական հայեցակարգի ինտելեկտուալ ներուժի վրա:

ԲԱԺԻՆ Ա

ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅԱՆ ՈՂԵՑՈՅՑ

Գիտական գրականության համաձայն՝ առավել հաջողակ, հիմնականում, անվտանգ և քաղաքականապես առավել ազդեցիկ են այն փոքր պետությունները, որոնց զարգացման և անվտանգային ռազմավարությունները ներառում են ազգ-պետության մասնագիտացման հայեցակարգի բաղադրիչներ¹¹: Մասնագիտացման հայեցակարգը միջազգային հարաբերություններում փոքր պետությունների համար առավել մրցունակություն ապահովող և դրանց ազդեցությունն ու վարկանիշը բարձրացնող կարևոր մեխանիզմներից մեկն է: Այն նաև համարվում է փոքր պետությունների նյութական և ոչ նյութական ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով ուժի կուտակման ոչ դասական մեթոդ, որի կապիտալիզացիայի միջոցով միջազգային հարաբերություններում հնարավոր է հասնել կայուն հեղինակության և քաղաքական կշռի բարձրացմանը¹²: Պետության մասնագիտացման ռազմավարությունը, համապատասխան արտաքին քաղաքական կապիտալիզացիայի դեպքում հավելյալ միջոցներ է ընձեռում քաղաքական առևտրի համար՝ թե՛ մեծ տերությունների (ասիմետրիկ հարաբերություններ), և թե՛ մրցակից փոքր պետությունների (սիմետրիկ հարաբերություններ) հետ հարաբերություններում՝ տալով տվյալ փոքր պետությունից այդ երկրների կախվածության բարձրացման հնարավորություն ¹³: Այլ կերպ ասած՝ փոքր պետությունների՝ տեսական գրականության մեջ մասնագիտացման ռազմավարությունը ներկայացված է որպես միջազգային քաղաքականության մեջ վերջիններիս մրցունակության բարձրացման և քաղաքական-գեոտնտեսական արժեկշիռ ձեռք բերելու որոշիչ ռազմավարություններից մեկը¹⁴: Իր մեջ կրելով մի շարք ուղղություններում արհեստավարժություն և համաշխարհային առաջատարություն գրանցելու մոտիվացիա-ծրագիր՝ պետության մասնագիտացման հայեցակարգը տեղավորվում է ժամանակակից աշխարհակարգի երկրների բարդ համակախվածության (*complex interdependence*) տրամաբանության մեջ¹⁵՝ ապահովելով հստակ սահմանված մի շարք ինդուստրիալ-տնտեսական, նորմատիվ-

¹¹ Bukovskis K., Palkova, A., Bikovs, A. 2021, *Foreign Policy Specialization of Small States: Latvia's Engagement in Central Asia*, Romanian Journal of International Affairs, Volume 21, Issue 2. Pp. 114-129; Herbut, M. 2017. *The Application of Role Theory in Explaining the Policies of Small States*. In: Georgia and Moldova in the Context of Russian Imperialistic Foreign Policy. Warsaw: Wydawnictwo Uniwersytetu Wrocławskiego, pp. 161-186.

¹² Long T. 2017. *Small states, great power? Gaining influence through intrinsic, derivative, and collective power*, International Studies Review, Volume 19, Issue 2, pp.185-205.

¹³ Wivel A. 2019. Non-classical methods of the small state bargaining in international politics.

¹⁴ Baldacchino, G. 2019. *The competitiveness of small states: Insights on flexible specialization*, Small States & Territories, Vol. 2, Issue. 1, pp. 41-54. ; Weiss T., & Menclová B., 2023, *Specialization in the EU Small States' Foreign and Security Policy* (forthcoming);

¹⁵ Keohane, R. & Nye, J. 2012. *Power and Interdependence*. Boston, MA: Longman.

ինստիտուցիոնալ, արտաքին քաղաքական կամ ռազմական-անվտանգային ոլորտներում «ոբմնախորշերի» (*niche, ниша*) զբաղեցում¹⁶:

Պետության մասնագիտացման հայեցակարգային բարեփոխումների ուղղությամբ են գնացել Էստոնիան՝ իր կիրճ անվտանգության կամ ռոբոտացված ռազմական ավտոնոմ պլատֆորմների ոլորտներում, Սինգապուրը՝ թվային կառավարման համակարգերի, մարտադաշտի կառավարման տեխնոլոգիաների հարցում, Իսրայելը՝ ինելամիտ գյուղատնտեսության, նորարարական պաշտպանական համակարգերի հարցում: Մասնագիտացման հայեցակարգային բարեփոխումների ճանապարհով են շարժվել նաև Շվեյցարիան՝ 20-րդ դարում մասնագիտանալով ֆինանսաբանկային ոլորտում և ստեղծելով համաշխարհային նորմեր, ինչպես նաև ներկայումս արհեստական բանականության ոլորտում մասնագիտացման զգալի արդյունքներ գրանցած Թայվանը՝ միկրոչիպերի ծրագրային նախագծման և արտադրության, պաշտպանական տեխնոլոգիաների, նոր մարտավարությունների բնագավառներում մասնագիտացման և այլնի առումով:

Սկզբնական շրջանում, լինելով զուտ տեսական հայեցակարգ, որը հիմնված էր մի շարք փոքր պետությունների միջավայրային փոփոխություններին և սպառնալիքներին «արագ ադապտացվելու ճկունության»¹⁷ ուսումնասիրության վրա, հետսառըպատերազմյան փոքր պետություններին վերաբերող գրականության մեջ մասնագիտացման հայեցակարգը նախ աստիճանաբար ստացավ տեսական կոնցեպտուալիզացիա, իսկ վերջին շրջանում փաստացիորեն դարձավ մի շարք փոքր պետությունների համար ռազմավարական առաջնահերթությունների հիմնասյուն և գործառնական կիրառման ուղենիշ: Ազգ-պետության մասնագիտացման հայեցակարգի շոշափելի արդյունքներ են գրանցել Ավստրիան, Լիտվան, Սլովակիան, Չեխիան, Պորտուգալիան, Ռուանդան, Ֆինլանդիան, Թայվանը, ՄԱԷ-ն: Ամենադասագրքային օրինակներն են Իսրայելը, Սինգապուրն ու Էստոնիան, որոնք, հանրությանը հետևողականորեն կրթելով «ազգային դեմոկրատական կորպորատիվի» արժեհամակարգի վրա, կարողացել են վերացնել հանրություն-պետություն բաժանումը՝ ձևավորելով բարձրակարգ մասնագիտացվածությամբ և բարձր պետական գիտակցությամբ արդյունավետ ազգային բնակչություն և դրան համապատասխան հանրային կառուցվածք ու կուռ արժեհամակարգ:

Ազգային դեմոկրատական կորպորատիվը փոքր պետությունների պարագայում հիմնված է երեք փոխկապակցված մակարդակների վրա: Առաջինը վաղ հասակից սերմացվող անհատի հայրենիք-պետականություն-հանրություն կոլեկտիվ պատկանելությունն է: Այն ներդրվում է ապագա սերնդի մեջ ոչ թե վերացական (զուտ

16 Rane, K. 2011. *The diplomacy of Small States, in 21st-Century Diplomacy: A Practitioner's Guide - Key Studies in Diplomacy*, Publisher: Bloomsbury Publishing Plc

17 Katzenstein, P.J. 1985. *Small States in World Markets: Industrial Policy in Europe*. Cornell University Press.

ազգային պատմության միջոցով ազգային ինքնության և քաղաքացիական պարտքի սերմանում), այլ պրակտիկ ներազգային գործընկերության գաղափարախոսական միջավայր ձևավորելու միջոցով, որտեղ անհատի պոտենցիալի առավելագույն զարգացումն ի նպաստ պետության դառնում է քաղաքական էլիտաների և հանրության առաջնահերթությունը: Ազգային դեմոկրատական կորպորատիվը արտացոլվում է հանրության համապատասխան կառուցվածքի շրջանակներում ձևավորված ներհանրային ընկերվարության ազգային մակարդակում: Այլ կերպ ասած՝ քաղաքացիների անհատական մասնագիտական աճը և մշտապես կատարելագործումը, մարդկային և պրոֆեսիոնալ բարձրակարգ որակներին և կարգապահության ձգտումը որպես հայրենասիրության դրսևորման հետ մեկտեղ, դեմոկրատական կորպորատիվի առաջին՝ գաղափարական հիմնասյունը ենթադրում է մասնագիտացված անհատների և խմբերի (հանրույթներ, գիլդիաներ, արհմիություններ) ներհամազգային (հորիզոնական) համագործակցություն և բարդ բազմաբնույթ ինքնակազմակերպում և ինքնահամակարգում:

Այս պարագայում, դեմոկրատական կորպորատիվը հիմնված է լինում ոչ թե ավանդաբար ձևավորված մեկ միատիպ աշխատանքային մշակույթ-էթիկայի գերակայության, այլ մշակութային բազմազանության և տարբերակվածության վրա՝ խրախուսելով ներառական, համագործակցային առողջ ներքին մրցակցություն՝ մշտական ուսումնառության և կատարելագործման պայմաններում: Ի վերջո, ազգային դեմոկրատական կորպորատիվի համակարգային գործառույթներից է պետության կենսունակության բարձրացմանը նպաստելը՝ հանրության կողմից սահմանափակ ռեսուրսների կամ պետության փոքր-խոցելի տարածքի/սահմանների պարագայում: Աշխատանքային մշակույթի բազմազանեցումը նաև ենթադրում է ոչ թե ուղղահայաց կառուցվածքի (պետական համակարգ-մասնագիտացված խմբեր) միջոցով, այլ մասնագիտացված խմբերի բազմաբնույթ և բազմատիպ հորիզոնական համագործակցության միջոցով, որը պետության հիմնարար նորարարական մոդեռնիզացիային կտա ազատ գործընթացի բնույթ:

Փոքր պետությունների ազգային դեմոկրատական կորպորատիվի երկրորդ կարևոր հիմնասյունը, որը դյուրին է դարձնում պետության ազգային մասնագիտացման հայեցակարգի ներդրումն ու զարգացումը, մասնագիտացված խմբերի շահերի կենտրոնացված և համընդհանուր համակարգում ապահովող համակարգն է¹⁸: Այն մի կողմից կանխարգելիչ դեր է կատարում հանրություն մեջ օտար մանիպուլատիվ խոսույթների վրա կառուցված օրակարգերի ներթափանցման համար, մյուս կողմից թույլ չի տալիս ազգային օրակարգերի ձևավորումը դարձնել ինքնաբերիկ և մեկ քաղաքական խմբի փողոցային բողոքի խնդրո առարկա: Ինստիտուցիոնալ առումով նման համակարգը համազգային մասնագիտական խմբերի կողմից առաջ

¹⁸ Harbut, M. 2017. Նշված աղբյուր:

քաջած կոնսենսուսային ազգային օրակարգեր ձևավորող ենթակառուցվածքի դեր է կատարում և պատվիրակում է գործող օրվա իշխանությանը սպասարկել հանրության կողմից առաջ քաջված համազգային օրակարգը:

Փոքր պետությունների դեմոկրատական կորպորատիվի երրորդ կարևոր առանցքը մասնագիտացված խմբերի ներքին փոխգործակցության մշակույթն է միմյանց, ինչպես նաև պետական կառույցների և քաղաքական կուսակցությունների հետ: Այս պարագայում, շահերի բախում պարունակող հնարավոր այլընտրանքային առաջնահերթություն հանդիսացող օրակարգերը՝ թե՛ մասնագիտացված խմբերի, և թե՛ պետական բյուրոկրատիայի կամ քաղաքական կուսակցությունների միջև, համակարգվում և ներդաշնակեցվում են շարունակական քաղաքական առևտրի (*political bargaining*) մշակույթի միջոցով: Այլ կերպ ասած՝ մասնագիտացված խմբերը, միմյանց հետ համագործակցելով, իրենց շահերը առաջ մղող քաղաքական ուժերի համար ստեղծում են օրակարգ: Եւ՛ խորհրդարանում մասնագիտացված խմբերի շահերի պաշտպանությամբ զբաղվող քաղաքական ուժերը, և՛ պետական համակարգը հանրության մասնագիտացված տարբեր շերտերի դիսկուրսների շնորհիվ և ուրույն հակակշռման և փոխզույգման համակարգի միջոցով իրականացնում են ազգային օրակարգերի ձևավորման գործընթացի ապահովում, ինչն էլ իր հերթին կարող է ֆիլտրի դեր խաղալ արտաքին հիբրիդային, ինֆո-մանիպուլատիվ ներթափանցումները չեզոքացնելու հարցում:

Հանրության և պետական ինստիտուտների փոխակերպման տեսանկյունից Մասնագիտացման հայեցակարգը կնպաստի հանրության շրջանում աշխատանքային և ապրելակերպի նոր մշակույթի աստիճանաբար ձևավորմանը՝ միտված հանրության և նոր սերնդի քաղաքացիների շրջանում պրոֆեսիոնալ պատասխանատվության, մասնագիտական արհեստավարժության չափանիշների և պրոտոկոլային մտածելակերպի ներդրմանը՝ ի նպաստ ազգային ներքին տոկունության և արտաքին դիմադրողականության բարձրացմանը: Սա իր հերթին կբերի հանրային նոր, բարձր նշաձողերի և արժեհամակարգի ձգտող պետականակերտ և համակարգակիր ազգի ինքնության ձևավորումը: Ավելին՝ իրատեսական կարող է համարվել հանրության մասնագիտացման հայեցակարգի այդքունավետ ներդրման համապարփակ անվտանգային համակարգի զուգակցումը: Երկու հայեցակարգերի արդյունավետ համակցումը, տեղայնացումն ու բազմաշերտ կիրարկումը հնարավոր է մտածված, ներքին տեղեկատվական-քարոզչության, այն է՝ արժեհամակարգ ձևավորող հետևողական տեղեկատվական, կրթական քաղաքականության շորհիվ:


Ազգային դեմոկրատական կորպորատիվի մեխանիզմի վրա խարսխված փոքր պետությունների մասնագիտացման հայեցակարգը՝ համակցված համապարփակ անվտանգային համակարգի հետ, (համապարփակ անդրադարձ է կատարվել մեր

նախկին աշխատություններից մեկում¹⁹) հնարավոր է միայն հմուտ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորման պայմաններում: Այն ենթադրում է մի շարք քաղաքականությունների համապարփակ և հաշվարկված մշակում և միննույն ժամանակ ներդրում՝ կրթության, անվտանգային, պետական ինստիտուտացիոնալ-կադրային և տեղեկատվաքարոզչական բնագավառներում: Սույն մոտեցումը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում հնարավորություն կտա ձևավորել նոր ազգային-պետական բարձր պատասխանատվության զգացողություն, ամուր արժեհամակարգ և պետական մտածելակերպ ունեցող, ինքնամոտիվացվող պասիոնար և պրոֆեսիոնալ հանրություն:

Ձևավորվող նոր՝ սուր հակամարտային աշխարհակարգում, որտեղ կոնվենցիոն կամ հոգեբանական - հիբրիդային պատերազմները աստիճանաբար դառնում են միջազգային քաղաքականության բաղկացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունն ու պետականակերտ հանրությունը, իր ուրույն ինքնությամբ և քաղաքական դերակատարմամբ, կարող է գոյատևել իր միջավայրում, ինչպես նաև ձգտել օրակարգեր թելադրել բացառապես իր ներքին կուռ, ժամանակակից, մոտիվացվող և մարտահրավերներին միշտ պատրաստ ազգային ինքնության դրսևորմամբ: Վերոնշյալը հնարավոր է մասնագիտացված պետության և համապարփակ անվտանգային համակարգ հայեցակարգերի համալիր-համակարգային ներդրման միջոցով: Հայաստանի Հանրապետության պարագայում այն կարող է ձևակերպվել ոչ բլոկային «Ամրոց-պետություն. մարտնչող ժողովրդավարություն» հայեցակարգի շրջանակներում:

¹⁹ Աբրահամյան Է. և Մարգարյան Ա. 2022. ՀՀ Ձինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ «Կանաչ թուղթ», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ:

ԱՐՄԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Հեղինակ՝ Արմինե Մարգարյան, ռազմաքաղաքական հարցերով փորձագետ:

Ա. Մարգարյանն աշխատանքային գործունեություն է ծավալել ՀՀ Անվտանգության խորհրդում, որպես գրասենյակի ղեկավար, իսկ մինչ այդ՝ որպես ԱԽ քարտուղարի խորհրդական, ՀՀ արտաքին գործերի նախարարության Սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության փորձագետ, ԱՊՀ վարչության ռեֆերենտ:

Ա. Մարգարյանն ավարտել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիան, միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում է ստացել Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանում և մասնակցել է մասնագիտական փորձառության հարստացման ծրագրերի՝ Ժնևի անվտանգության քաղաքականության կենտրոնում, Ջորջ Մարշալի անվտանգային ինդիքների Եվրոպական կենտրոնում, ՆԱՏՕ-ի դպրոցում, Ջորգիայի համալսարանի Միջազգային անվտանգության և ռազմավարական նշանակության ապրանքների արտահանման վերահսկման կենտրոնում, Նիդերլանդների «Քլինգենդալ» միջազգային հարաբերությունների ինստիտուտում:

Ա. Մարգարյանը հանդես է գալիս հարցազրույցներով, դասախոսություններով և բազմաթիվ հետազոտությունների և հոդվածների հեղինակ է:

ԲԱԺԻՆ Բ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ՆՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՓՈՔՐ ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ իրականացվող ռազմական ագրեսիան լրջագույն մարտահրավեր է նետել եվրոպական և գլոբալ անվտանգությանը, ինչն անխուսափելիորեն իր ազդեցությունն է ունենում գլոբալ աշխարհակարգի վերանայման շուրջ մոտեցումների ձևավորման և այդ գործընթացներում միջազգային քաղաքականության դերակատարների հնարավոր մասնակցության և համապատասխան դիրքավորման համար: Գլոբալ դերակատարների կողմից ուժային միջոցներով վարվող մրցակցային քաղաքականության վերադարձը և ազդեցության գոտիների հաստատման քաղաքականությունը սպառնում են միջազգային

հարաբերություններում առկա վարքագծի կանոններին, քաղաքական և ինստիտուցիոնալ ձևաչափերի կենսունակությանը, ինչպես նաև նպաստում են ձևավորվելիք աշխարհակարգում նոր բաժանարար գծերի հաստատմանը:

Մինևույն ժամանակ, Արցախյան 44-օրյա պատերազմին հաջորդիվ Հայաստանի Հանրապետության անվտանգային ճարտարապետության և տարածաշրջանային ուժային հավասարակշռության փլուզումը, Ադրբեջանի՝ իր ռազմավարական նպատակների իրականացմանը միտված գործիքակազմում Հայաստանի Հանրապետության դեմ օգտագործվող ուժի և ուժի սպառնալիքի կիրառման քաղաքականության լեգիտիմացման շարունակական փորձերը, և Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ իրականացվող էթնիկ զտման քաղաքականությունը լրջագույն մարտահրավեր են նետում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանն ու անկախությանը, ինչպես նաև՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ ճանապարհով հանգուցալուծմանը:

Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած պատերազմն, իր հերթին, նպաստավոր պայմաններ է ստեղծում Հայաստանի Հանրապետության անմիջական ռազմավարական միջավայրում Պետության ազգային անվտանգությանը սպառնացող ռիսկերի ու մարտահրավերների ակտիվացման և նոր սպառնալիքների շարունակական առաջացման համար, ինչն էլ իր հերթին առավել է բարդացնում ձևավորվող նոր աշխարհակարգում Հայաստանի Հանրապետության հնարավոր բարենպաստ դիրքավորումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ ազգային անվտանգային շահերից է բխում հայեցակարգային վերանայման ենթարկել Պետության արտաքին քաղաքականությունը՝ միտված արտաքին դաշտում ազգային անվտանգային շահերից և առաջնայնություններից բխող դիրքորոշումների ձևավորմանն ու դիվանագիտական միջոցներով դրանց սպասարկմանը, ինչպես նաև արտաքին քաղաքականության սպասարկման գործիքների արագ և ճկուն ադապտացվելու կարողությունների ձևավորմանը՝ տարածաշրջանային և գլոբալ ռազմաքաղաքական զարգացումներին համընթաց: Սույն մոտեցմամբ իրականացվելիք արտաքին քաղաքականության արդյունավետության չափման ցուցիչը դիվանագիտական տարատեսակ գործիքների կիրարկմամբ Հայաստանի Հանրապետության կարճաժամկետ անվտանգային խնդիրների հասցեագրումն է, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ անվտանգային խնդիրների հասցեագրման, Պետության երկարաժամկետ կենսունակության, պաշտպանունակության և կայուն զարգացման ապահովման համար արտաքին դաշտում համակարգային բարենպաստ պայմանների ձևավորումն է:

Հաշվի առնելով այն տեսակետը, որ «Պետության մասնագիտացման» և «Համապարփակ անվտանգային համակարգի» հայեցակարգերի համալիր-համակարգային ներդրումը առևտրայթ արդյունավետ է²⁰ Հայաստանի Հանրապետության կողմից իր անմիջական միջավայրում ուժ և ազդեցություն պրոյեկտելուն միտված նպաստավոր պայմաններ ձևավորելու համար՝ վերանայված արտաքին քաղաքականության հայեցակարգը պետք է հենվի ոչ միայն ՀՀ ազգային անվտանգության հայտարարված ռազմավարության դրույթների վրա, այլ նաև՝ բխի ՀՀ ազգային անվտանգության խորքային ռազմավարության առանձնահատկություններից: Մույն մարտավարությունը, ի թիվս այլ առավելությունների, հնարավորություն է ընձեռում մշակել Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերվելուն միտված առանձին խորքային ռազմավարություն, կամ այն ներառել ՀՀ ազգային անվտանգության համապարփակ խորքային ռազմավարության մեջ: Հաշվի առնելով այն իրողությունը, որ Ադրբեջանն իրեն ճանաչել է 1918-20թթ. Մուսաֆաթական Ադրբեջանի իրավահաջորդ՝ խորքային ռազմավարության ներդրումն ու դրանից բխող արտաքին քաղաքականության հայեցակարգի մշակումը կարող է միտված լինել նաև Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում սահմանազատման գործընթացներից բխող և Ադրբեջանի ծավալապաշտական քաղաքականությամբ պայմանավորված հավանական սցենարների մշակմանը՝ միտված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգային շահերին սպառնացող ռիկերի կառավարման նպատակով արտաքին դաշտում նպաստավոր պայմանների ձևավորմանը: Զուգահեռաբար, այն հնարավորություն է ընձեռում Պետության հայտարարված ազգային անվտանգության ռազմավարության կիրարկման ճանապարհին բանեցնել դիվանագիտական գործիքների արագ և ճկուն ադապտացվելու կարողություններ, ինչպես նաև համակարգայնացնել հիբրիդային գործիքակազմի կիրարկման ազգային կարողություններ՝ տարածաշրջանային ու գլոբալ զարգացումների գուզընթաց:

Մինևույն ժամանակ, հատկանշական է, որ վերոնշյալ դիտարկումներն իրատեսական կարող են համարվել և գործառնական կիրառելիություն ունենալ բացառապես այն պարագայում, եթե Հայաստանի Հանրապետությունն արդի միջազգային հարաբերություններում իրեն դիրքավորի որպես ոչ բլոկային (չմիավորված) կարգավիճակ ունեցող փոքր պետության՝ արտաքին դաշտում մանևրելու ազատությունից օգտվելու և ոչ բլոկային բազմավեկտորության գործիքները թիրախային կիրարկելու համար: Հետևաբար, ՀՀ արտաքին քաղաքականության վերանայված հայեցակարգը պետք է բխի աշխատության Գլուխ Ա-ում ներկայացված «Ամրոց-պետություն. մարտնչող ժողովրդավարություն» հայեցակարգից:

20 Տես սույն աշխատության գլուխ Ա-ն:

Այսպես՝ թեպետ գոյություն չունի «Չմիավորման» համընդհանուր ընդունելի սահմանում, այն դիտարկվում է որպես Պետության կողմից որևէ ռազմական դաշինքին անդամակցելուց ձեռնպահ մնալու քաղաքականություն: Հատկանշական է, որ չմիավորման քաղաքականությունը հանդիսանում է ոչ թե որոշակի հակամարտության ժամանակ դիրքորոշում, այլ՝ համապարփակ քաղաքականություն: Հետևաբար, այն տարբերվում է և առավել ընդգրկուն է, քան «չեզոքություն» քաղաքականությունը, քանի որ վերջինս ոչ թե հանդիսանում է Պետության արտաքին քաղաքականության սկզբունք, այլ կիրառվում է որոշակի պատերազմի կամ հակամարտության պարագայում²¹:

Չմիավորման քաղաքականությունը տարբերվում է նաև «Ապահովագրման» քաղաքականությունից (*hedging*), քանի որ մինչ չմիավորման դեպքում պետությունը փակում է իր առջև դեպի որևէ դաշինք տանող բոլոր ճանապարհները՝ ապահովագրման քաղաքականություն վարելու դեպքում պետությունը որդեգրում է չխառնվելու/չմիջամտելու մարտավարություն՝ զուգահեռաբար չբացառելով ապագայում որևէ դաշինքին անդամակցելու տարբերակը²²: Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ չմիավորման քաղաքականությունը որպես նպատակ դիտարկելը կարող է հանգեցնել արտաքին աշխարհից Պետության մեկուսացմանը: Հետևաբար, այն անհրաժեշտ է դիտարկել որպես միջոց՝ բլոկային կարգավիճակից բխող համակարգային սահմանափակումները շրջանցելու ճանապարհով ռազմավարական գործընկերների փոխշահավետ ցանց ստեղծելու, փոքր պետությունների հետ փոխգործակցությամբ քաղաքական ուժ և ազդեցություն պրոյեկտելու և մեծերի ու փոքրերի առանձնահատկություններից բխող մոտեցումներում Հայաստանի Հանրապետության պետական շահը սպասարկելու, արտաքին քաղաքականության տեսանելիություն ապահովելու և տարածաշրջանային դերակատար դառնալու համար: Ավելին՝ չմիավորման քաղաքականությունը միջոց դիտարկելու պարագայում Պետության մասնագիտացման հայեցակարգը կարող է դառնալ արտաքին քաղաքական լոկոմոտիվ, քանի որ այն հստակեցնում է, թե **Հայաստանի Հանրապետությունը արտաքին հնարավոր գործընկերներից իր ակնկալիքները ձևակերպելուն զուգընթաց, ինչը կարող է նաև առաջարկել վերջիններին:**

Ոչ բլոկային բազմավեկտորության քաղաքական կուրսի որդեգրումը ռազմավարական պլանավորման և համակարգային ձևաչափերի հաստատման հետ զուգահեռ նպաստում է նաև արտաքին քաղաքականության ոլորտում Համադաշնության ռազմավարության²³ արդյունավետ կիրարկմանը՝ միտված հիմնական խոշոր գործընկերների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական միջավայրի բազմազանեցմանը և մեկ ռազմավարական

²¹ Khanna VN (2018) Foreign Policy of India. 7th edn. New Delhi: Vikas Publishing House.

²² Goh E (2005) The US–China relationship and Asia-Pacific security: negotiating change. Asian Security 1(3).

²³ Չասանելի է հետևյալ հղումով՝ https://hcv.am/wp-content/uploads/2023/02/USA_Armenia-CSTO-Armenia-English.pdf

գործընկերոջ գերակայության, նրանից կախվածության նվազեցմանը: Սույն հայեցակարգը լայն պատուհան է բացում նաև արտաքին գործոններից կախվածության նվազեցման պայմաններում Պետության ռազմական հզորությունների ստեղծման, պահպանման և շահագործման համար: Ըստ այդմ, այն նպաստում է նաև Հայաստանի Հանրապետության կենսական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ կրիտիկական նշանակության հնարավորությունների նկատմամբ ինքնաբավության սկզբունքի կիրարկմանը:

Համադաշնության ռազմավարության կիրարկման հնարավոր արգասիք կարող է հանդիսանալ այնպիսի երկկողմ և/կամ եռակողմ ռազմավարական գործընկերային ձևաչափերի ձևավորումը, որոնք միտված կլինեն և՛ տարածաշրջանային (օրինակ՝ Հայաստան-Հունաստան-Կիպրոս), և՛ միջտարածաշրջանային (օրինակ՝ Ուրուգվայ-Հայաստան-Սինգապուր) ռազմավարական օրակարգերի ձևավորմանն ու սպասարկմանը: Ոչ բլոկային բազմավեկտորության քաղաքականության պարագայում Պետությունը կարող է նաև մի շարք այլ փոքր պետությունների հետ համատեղ մտահոգությունների և շահերի իդենտիֆիկացիայի միջոցով ձգտել ձևավորել իրավիճակային կոալիցիաներ՝ միտված տարատեսակ մարտահրավերների և խնդիրների համատեղ կանխարգելմանն ու արձագանքմանը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Ֆրանսիա-Վրաստան-Հայաստան-Իրան-Հնդկաստան առանցքի գաղափարը, որի կիրարկման համար նպաստավոր պայմաններ կարող են ձևավորվել կրկին ոչ բլոկային բազմավեկտորության գործիքները օգտագործելու պարագայում՝ միտված Հայաստանի Հանրապետության՝ իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնությունից առկա կախվածության թուլացմանը և Ադրբեջանից ու Թուրքիայից հնարավոր կախվածության կանխարգելմանը:

Հատկանշական է, որ ոչ բլոկային կարգավիճակը հնարավորություն է ընձեռնում Հայաստանի Հանրապետությանն իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնության հետ փոխհարաբերություններում հայեցակարգային հենքի վրա դնել փոխադարձության սկզբունքը՝ և՛ երկկողմանիության, և՛ բազմակողմանիության գործընթացներում: Մասնավորապես՝ երկկողմանիության շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը կարող է ձգտել Ռուսաստանի հետ ձևավորել այնպիսի հարաբերությունների մոդել, որտեղ փոխադարձության սկզբունքը կհենվի գույգ դերակատարների միջև պարտավորությունների հստակ հավասարակշռման վրա: Բազմակողմանիության գործընթացներում, մասնավորապես՝ միջազգային կազմակերպությունների շրջանակներում, փոխադարձության սկզբունքը կարտահայտվի դիֆուզ տարբերակով՝ չենթադրելով զիջումների կամ պարտավորությունների համարժեքություն, այլ նախատեսելով վարքագծի համընդհանուր ընդունված կանոնների պահպանում:

Ուկրաինական պատերազմն ակտիվացրել է նաև միջազգային հարաբերություններում բազմակողմանիության նկատմամբ տարատեսակ մոտեցումների շուրջ քննարկումները, ինչը ոչ բլոկային բազմակողմանիության քաղաքականության պարագայում փոքր պետություններին առաջարկում է տարատեսակ հնարավորություններ: Մասնավորապես՝ միջազգային հարաբերություններում բազմակողմանիության առկա ձևաչափերը (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՆ և այլն), չնայած շարունակվող ճգնաժամին, դրսևորում են հարաբերական դիմադրողունակություն: Հայաստանի Հանրապետությունը, համադաշնության ռազմավարության կիրարկման հետ զուգընթաց, պետք է աջակցի կանոնների վրա հիմնված միջազգային կարգի պահպանմանն ու ամրապնդմանը, քանի որ այն փոքր պետությունների համար ստեղծում է «խաղի հավասար պայմաններ», իսկ խոշոր տերությունների կողմից կանոնների խախտումը դարձնում է ռեսուրսատար գործընթաց²⁴: Միևնույն ժամանակ, բազմակողմանիության գործընթացներն անհրաժեշտ է դիտարկել նաև որպես բազմակողմանի համակարգային ռազմաքաղաքական հարաբերություններ ձևավորելու և զարգացնելու պլացդարմ: Օրինակ՝ բազմակողմանիության մոտեցումների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում Ժողովրդավար պետությունների անվտանգային համայնքի ձևավորումը²⁵: Ժողովրդավարների լիզայի ձևավորման գաղափարի կողմնակիցները պնդում են, որ համաշխարհային հանրության զարգացած ժողովրդավարությունների «միությունը» միջազգային համակարգը վերակառուցելու միակ միջոցն է՝ հիմնված «իրավունքի գերակայության, այլ ոչ թե ջունգլիների օրենքի վրա²⁶»: Այն բաց հասարակություններին հնարավորություն է ընձեռում պաշտպանվելու ավտորիտար հակառակորդներից և ամրապնդելու խաղաղությանը նպաստող միջազգային վարքագծի կանոնները: Մինչդեռ, հարկ է ընդգծել, որ միջազգային հարաբերություններում առկա գործընթացներն ի ցույց են դնում նաև ուժային գործոնի կիրարկմամբ ժողովրդավարությունը պաշտպանելու և դրա դեմ պայքարելու շարունակական միտումներ: Ավելին՝ աշխարհակարգի հիմքում չի կարող դրվել միայն ժողովրդավարական համերաշխության գաղափարը, քանի որ այն կարող է հանգեցնել աշխարհաքաղաքական տարաձայնությունների, ժողովրդավար և ավտորիտար ճամբարների ամրագրմանը՝ խաթարելով ավտորիտար ռեժիմների հետ իրատեսական համագործակցության հեռանկարները, այդ թվում նաև՝ խաղաղությանն ու անվտանգությանը, կլիմայական փոփոխությանն ու համաշխարհային տնտեսությանը վերաբերող կարևորագույն հարցերի շուրջ:


24 Iver B. Neumann and Sieglind Gstöhl "Introduction: Lilliputians in Gulliver's World?" in Christine Ingebritsen, Iver Neumann, Sieglinde Gstöhl and Jessica Beyer (eds.) Small states in International Relations (Seattle: University of Washington Press).

25 The concept of security communities was coined by Karl Deutsch and his colleagues in Deutsch et al., Political Community in the North Atlantic Area: International Organization in the Light of Historical Experience (Princeton: Princeton University Press, 1957).

26 "Warsaw Declaration: Toward a Community of Democracies," Community of Democracies, <https://community-democracies.org/app/uploads/2017/02/2000-Warsaw-Declaration-1-1.pdf>.

նոր ռիսկեր ու սպառնալիքներ: ՀՀ կիրեռ և տեղեկատվական անվտանգության քաղաքականության տեսլականի հիմքում պետք է լինի այն համոզմունքը, որ ոլորտում պետական ներդրումները միտված են ՀՀ ապագայի համար: Հետևաբար, ոլորտի առաջարկվող տեսլականն է՝ *«Թվային անվտանգություն բոլոր համար» հայեցակարգը*: Հայաստանի Հանրապետության թվային միջավայրը պետք է լինի բաց, ազատ, կայուն և անվտանգ⁵⁵, որպեսզի օգտատերերը նույնչափ անվտանգ զգան, որքան ֆիզիկական աշխարհում:

Կիրեռահանցավորությունների և ապատեղեկատվությունների աճով⁵⁶, ոլորտ վատ դերակատարների համար մուտք գործելու ցածր գնով, հարձակում-պաշտպանություն ծախսերի անհամաչափությամբ⁵⁷ պայմանավորված ՀՀ կիրեռ և տեղեկատվական անվտանգության ոլորտի զարգացման համընդհանուր նպատակը պետք է լինի **բարձր ճկունության մակարդակի ձևավորումը** ([digital] resiliency): Փոքր պետությունների փորձը և ոլորտի առանձնահատկությունները հուշում են, որ հնարավոր չէ ձևավորել տոտալ պաշտպանական համակարգեր, որոնք գրեթե անհնարին կդարձնեն հակառակորդի կողմից ներթափանցումները: Հետևաբար, ոլորտի նպատակների ձևավորման և կարողությունների զարգացման հիմքում պետք է լինի հաջող հարձակման դեպքում պետության, հասարակության և կազմակերպության արագ վերականգնվելու (ճկունության) գաղափարը:

Ուստի, ՀՀ-ն պետք է հետապնդի չորս հիմնական ուղղություն/նպատակ՝ *1) կիրեռ ճկունություն պետական, մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, 2) անվտանգ և նորարարական թվային ծառայություններ, 3) պետական և ոչ պետական դերակատարների կողմից կիրեռհարձակումներից արդյունավետ պաշտպանություն, և 4) աշխատաշուկայի զարգացում և հանրային կիրեռ ճկունություն*: Կիրեռ և տեղեկատվական անվտանգության վերոնշյալ չորս հիմնական ուղղությունները/նպատակները հիմնվում են ստորև աղյուսակում ներկայացվող արժեքների վրա:

⁵⁵ Համաձայն նաև Կիրեռ տարածքում Փարիզի հռչակագրով ստանձնած պարտավորությունների

⁵⁶ Statista. 2022. Estimated cost of cybercrime worldwide from 2016 to 2027. December 2. Accessed March 10, 2023. <https://www.statista.com/statistics/1280009/cost-cybercrime-worldwide/#:~:text=The%20global%20cost%20of%20cybercrime,U.S.%20dollar%20mark%20in%202023.>

⁵⁷ Swinhoe, Dan. 2020. CSO Online - How much does it cost to launch a cyberattack? May 1. Accessed March 20, 2023. <https://www.csoonline.com/article/3237324/what-is-a-cyber-attack-recent-examples-show-disturbing-trends.html>.

Աղյուսակ 1. Կիրեռանվտանգության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները և դրանց հիմքում ընկած արժեքները

| <i>Ուղղություն</i> | <i>Հիմքում ընկած արժեք(ներ)</i> | <i>Բացատրություն</i> |
|---|---|--|
| Ճկունություն | Կարևոր ենթակառուցվածքների անխափան և կայուն աշխատանք | Կազմակերպությունները պատշաճ կերպով պաշտպանված են կիրեռ ռիսկերի դեմ և գիտակցում են իրենց կարևորությունը ոլորտի և այլ կազմակերպությունների շղթայի համատեքստում: |
| Անվտանգ ու նորարարական թվային ծառայություններ | Ծառայությունների մատչելիություն և տնտեսական զարգացում | Հայաստանցիներին տրամադրված (թվային) ծառայությունները պետք է արդեն իսկ նախագծման փուլում լինեն անվտանգ: ՀՀ մուտք գործող տեխնոլոգիական արտադրանքը չպետք է առաջացնի անընդունելի մատակարարման շղթայի ռիսկեր: |
| Կիրեռ հարձակումներից պաշտպանվածություն | Անկախություն, հինքնիշխանություն | ՀՀ-ն պետք է ձևավորի բավարար կարողություններ կիրեռ տարածքում պաշտպանելու թվային ենթակառուցվածքները, ուստի նաև՝ ՀՀ անկախությունն ու հինքնիշխանությունը: |
| Աշխատաշուկայի զարգացում և հանրային կիրեռ ճկունություն | Գիտություն, նորարարություն, կրթություն | Որակյալ մասնագետների պատրաստում պետական և ոչ պետական կարիքների համար: Հասարակության շրջանում վարքագծային փոփոխություններ: |

1.5 Կիրեռանվտանգության ոլորտի առաջնային գործողությունները

Ստորև Աղյուսակ 2-ում ներկայացվում են առաջնային գործողությունները՝ ըստ ուղղությունների՝

Աղյուսակ 2. Կիրեռանվտանգության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները և առաջնային գործողությունները

| <i>Ուղղություն</i> | <i>Գործողություն</i> |
|--------------------|--|
| Ճկունություն | 1. Կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների օրենքի մշակում և ընդունում |

| | |
|--|--|
| | <p>2. Օրենքի հիման վրա Կիբեռանվտանգության ազգային կենտրոնի ստեղծում</p> |
| <p>Անվտանգ ու նորարարական թվային ծառայություններ</p> | <p>1. SS տեխնոլոգիաների պետական գնումներում կիբեռանվտանգության պահանջների ձևավորում և կիրառում</p> <p>2. Էլեկտրոնային կառավարման համակարգի անվտանգության պահանջների համադաշնակեցում</p> <p>3. Բնակչության Էլեկտրոնային ծառայություններ մատուցող կազմակերպություններում ISO27x շարքի ստանդարտների կիրառում</p> |
| <p>Կիբեռհարձակումներից պաշտպանվածություն</p> | <p>1. Համակարգչային պատահարների արագ արձագանքման թիմերի ձևավորում</p> <p>2. Կիբեռանվտանգության ազգային կենտրոնում և քննչական մարմիններում կիբեռհարձակումների հայտնաբերման և քննչական կարողությունների զարգացում</p> <p>3. Կիբեռտարածքում Հայաստանի Հանրապետության համար ընդունելի պետության վարքագծի կանոնների առաջխաղաղացում՝ միջազգային հարթակներում:</p> |
| <p>Աշխատաշուկայի զարգացում և հանրային կիբեռ ճկունություն</p> | <p>1. Հանրության լայն շրջանակների համար կիբեռ ռիսկերի մասին իրազեկվածության արշավներ (օրինակ՝ Կիբեռանվտանգության ամիս)</p> <p>2. Նախակրթական և հանրակրթական ծրագրերում կիբեռ ռիսկերի և հիգիենայի վերաբերյալ դասընթացների ներառում</p> <p>3. Բարձրագույն և հետբուհական հաստատությունների հետ միասին կիբեռանվտանգության մասնագետների պատրաստում և վերապատրաստում</p> |

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես փոքր պետություն և կիբեռ ուժ, դիրքավորելու և համապատասխան վարքագիծ դրսևորելու համար առանցքային է ակտիվ մասնակցությունը ոլորտի նորմերի զարգացման և ձևավորման գործում

(մասնավորապես՝ միջազգային իրավունքի կիրառելիությունը կիրառարաձևում և կիրառարաձևում պետությունների ընդունելի վարքագծի կանոնների ուղղությամբ):

2. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԵՆՔԸ

2.1 Էներգետիկ անվտանգության ոլորտի զարգացման տեսական հիմքը և դրա բաղկացուցիչ մասերը

ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովումը ազգային անվտանգության անբաժանելի բաղադրիչներից է: Էներգետիկ անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետությունը պետք է հետապնդի կամ բավարարի չորս հիմնական ուղղություն/չափանիշ՝ 1) *հասանելիություն*, 2) *մատչելիություն*, 3) *էներգետիկ արդյունավետություն* և 4) *կայունություն*:

1) *Հասանելիությունը* վերաբերում է էներգետիկ ոլորտում հարաբերական անկախությանը և բազմազանեցմանը: Բազմազանեցման ընդունելի մակարդակի հասնելու համար անհրաժեշտ է զուգահեռաբար իրականացնել աշխատանքներ առնվազն երեք ուղղությամբ՝ 1) էներգետիկ աղբյուրների բազմազանեցում (գազ, ատոմային էներգիա, ածուխ, վերականգնվող էներգիա), 2) էներգիայի ձեռքբերման մատակարարների բազմազանեցում, 3) տարածական և էներգետիկ ենթակառուցվածքների բազմազանեցում՝ աշխարհագրորեն սփռելով էներգիայի արտադրման, փոխանցման և պահպանման ենթակառուցվածքները:

2) *Մատչելիությունը* վերաբերում է էներգիայի հասանելի գներին, հասարակության համար գների կանխատեսանելիությանը, թափանցիկությանը, կայունությանը, ինչպես նաև էներգիայից օգտվելու հնարավորության ապահովմանը, այդ թվում նաև՝ խոցելի և բնակչության այլ հատուկ խմբերի համար:

3) *Էներգետիկ արդյունավետությունը* ավելի քիչ էներգիայի օգտագործումն է նույն սպառման պահանջները բավարարելու նպատակով: Էներգետիկ արդյունավետության մակարդակի բարձրացումը ներառում է նոր տեխնոլոգիաների և գործընթացների կիրառումը:

4) *Կայունությունը* ենթադրում է էներգետիկ ոլորտում սոցիալապես և բնապահպանական տեսանկյունից ընդունելի լուծումների կիրառում, չվերականգնվող և վերականգնվող ռեսուրսների համաչափ օգտագործում:

Էներգետիկ անվտանգության վերոնշյալ չորս հիմնական ուղղությունները/չափանիշները հիմնվում են ստորև աղյուսակում ներկայացվող արժեքների վրա:

| Աղյուսակ 3. ՀՀ էներգետիկ անվտանգության չորս չափանիշները | | |
|--|--|---|
| <i>Ուղղություն/չափանիշ</i> | <i>Հիմքում ընկած արժեք(ներ)</i> | <i>Բացատրություն</i> |
| Հասանելիություն | Անկախություն | Էներգիայի աղբյուրների, մատակարարների և տարածական բազմազանեցում |
| Մատչելիություն | Արդարություն | Հասարակության համար ընդունելի գնով էներգիայի մատակարարում, գների տատանումների նվազեցում |
| Էներգետիկ արդյունավետություն | Գիտություն, նորարարություն, կրթություն | Հասարակության շրջանում վարքագծային փոփոխություններ, էներգախնայողություններ |
| Կայունություն | Սոցիալական և բնապահպանական կայունություն | Շրջական միջավայրի, հասարակության և ապագա սերունդների պաշտպանություն |

2.2 Ոլորտի համատեքստ և հիմնական մարտահրավերներ


ՀՀ կենսական անվտանգային շահերից է էներգետիկ անվտանգության ապահովումը, որն իր հերթին հիմնվում է չորս հիմնական չափանիշների վրա՝ հասանելիություն, մատչելիություն, էներգետիկ արդյունավետություն և կայունություն: Հասանելիության մակարդակը բարձրացնելու համար առանցքային դերակատարություն ունի ն՝ էներգիայի մատակարարների, և՛ էներգետիկ ենթակառուցվածքների դիվերսիֆիկացումը:

ՀՀ-ն անկախությունից ի վեր էական կախվածություն է ունեցել բնական գազից, և՛ մատակարարման, և՛ օգտագործման տեսանկյունից (*տե՛ս պատկեր 1 և 2*): Հատկանշական է, որ 1990-ականներին հաջորդող կառավարություններն իրենց ծրագրերում, էներգետիկ ոլորտի առանձին ռազմավարություններում⁵⁸ նշել են էներգետիկ անվտանգության կարևորության՝ էներգիայի աղբյուրների և

58 Հայաստանի Հանրապետություն. 2013. «ՀՀ Նախագայի կարգադրությունը ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին», Հայաստանի Հանրապետություն. 2021. «ՀՀ կառավարության որոշում, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

մատակարարման ցանցերի դիվերսիֆիկացման մասին, սակայն, ըստ էության, էական առաջընթաց չի գրանցվել:

ՀՀ-ն, ինչպես 1990-ականներին, այնպես էլ հիմա շարունակում է մեծածավալ կախվածությունը բնական գազից: Առավել մտահոգիչ է մեկ պետությունից/աղբյուրից կախվածության մակարդակը. ՀՀ բնական գազի 85% ներմուծվում է Ռուսաստանից, ՀՀ-ի ներսում և ՀՀ մուտք գործող գազատարների 100% պատկանում է ռուսական Գազպրոմին, ստոմային էներգիայի համար անհրաժեշտ վառելիքի նույնպես 100% ներմուծվում է Ռուսաստանից: Հետևաբար, ՀՀ կարիքների համար արտադրվող էներգիայի մոտ 70% շարունակում է կախված մնալ մեկ պետությունից, առաջացնելով




Աղբյուր՝ Միջազգային էներգետիկ գործակալություն

մտահոգություններ էներգիայի հասանելիության տեսանկյունից:

Սպառման տեսանկյունից այլընտրանքային էներգիան շարունակում է մնալ ոչ գործոն՝ կազմելով ընդհանուր սպառվող էներգիայի համամասնության մոտ 1%-ը:

ՀՀ էներգետիկ անվտանգության համատեքստում, մասնավորապես՝ Հասանելիության ապահովման տեսանկյունից, մտահոգիչ են նաև դեպի ՀՀ և ՀՀ շրջանցող տարածաշրջանային էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումները: Մասնավորապես՝ վերջին տասնամյակներում Ադրբեջանի կողմից հաջողությամբ վարվել է ՀՀ-ին տարածաշրջանային էներգետիկ ենթակառուցվածքներից մեկուսացնելու քաղաքականություն, և ՀՀ-ն դուրս է մնացել Արևելք-Արևմուտք էներգետիկ ենթակառուցվածքային ծրագրերից: Հաշվի առնելով տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը՝ առավել իրատեսական է հետապնդել Հյուսիս-Հարավ առանցքի շուրջ էներգետիկ ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր:

Պատկեր 2. Էներգիայի սպառումը ըստ աղբյուրների



Աղբյուր՝ Միջազգային էներգետիկ գործակալություն

ՀՀ և Վրաստանի հիմնական էլեկտրահաղորդման ցանցերը շարունակում են մնալ անջատ/ոչ սինխրոն (Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության էլ. ցանցերը իրար միացված են երկու 110 կՎ և մեկ 220 կՎ գծերով, որոնք չեն ապահովում ամբողջ ցանցի սինխրոնությունը, իսկ, օրինակ, Վրաստանի և Ռուսաստանի էլ. ցանցերը սինխրոն են), որն իր հերթին սահմանափակում է առևտուրը Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև: Առանցքային է Հայաստանի Հանրապետության էլեկտրահաղորդման ցանցի արդիականացման աշխատանքների արագ իրականացումը, որը հնարավորություն կտա մեծացնել շրջանառության ծավալները՝ նաև նվազեցնելով մեկ աղբյուրից կախվածության մակարդակը: Դրական է, որ 2021 թ-ին ՀՀ էներգետիկայի զարգացման ռազմավարությամբ Վրաստանի և Իրանի հետ էներգիայի առևտրի ծավալների մեծացումը դիտարկվում է որպես առաջնահերթություն (2022 թ-ին Վրաստան է արտահանվել 328 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա՝ նախորդ տարվա համեմատ 13% աճ⁵⁹): 400 կՎ բարձր լարման կայանների կառուցումը հնարավորության կտա դեպի Վրաստան արտահանումները հասցնել մինչև 1000 ՄՎտ:

Հայաստանի Հանրապետության և Իրանի էլեկտրահաղորդման ցանցերը սինխրոն են 1996 թվականից: 2021 թ. կառավարության էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարությամբ նախատեսվում է կառուցել Իրան - Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման օղային գիծ և 400 կՎ լարման ենթակայան, որը հնարավորություն կտա մեծացնելու դեպի Իրան արտահանումները մինչև 5000 ՄՎտ: Առանցքային է նաև Իրանի հետ «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» ծավալների

59 Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողով, հաշվետվություններ https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_reports

մեծացումը (գործարքը հիմա ապահովում է ՀՀ մուտք գործող բնական գազի միայն 15%-ը և օգտագործում է միայն էներգիայի արտադրման համար, հետևաբար, ամբողջ ներքին սպառումը հիմնվում է ռուսական գազի վրա):

Տեսականորեն Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) միասնական էլեկտրաէներգիայի, այդ թվում՝ գազի և նավթի շուկայի ձևավորումը կարող է առաջացնել հնարավորություններ (անդամ պետությունների միջև սինխրոն համակարգերի ձևավորմանը և մրցակցության մակարդակի բարձրացմանը): Սակայն, որոշ հիմնական գործոններ դարձնում են տեսական հնարավորությունների իրագործելիությունը քիչ հավանամակ: Առաջինը հենց ՀՀ և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև աշխարհագրական սահման չունենալն է: Հաջորդը՝ ԵԱՏՄ ձևավորումից ի վեր միասնական էլեկտրաէներգիայի շուկաների ուղղությամբ էական գործողությունների բացակայությունն է: ԵԱՏՄ անդամ պետություններից միայն երկուսն են գազի սպառման տեսանկյունից ինքնաբավ (Ռուսաստան և Ղազախստան): Անիրական է ենթադրել, որ միասնական շուկայի ձևավորմամբ կբարելավվի էներգիայի հասանելիության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում՝ առաջացնելով նոր մատակարարման աղբյուրներ: Հետևաբար՝ Հայաստանը շարունակելու է կախված մնալ Ռուսական գազից և ըստ էության կարող է փոխվել գազի գնման գործընթացը: Ավելին, ինտեգրումը ԵԱՏՄ միասնական շուկային և դրա ստանդարտներին առաջացնում է նոր խոչընդոտներ և անհամապատասխանություններ Հայաստան - ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով էներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների հետ:

Միաժամանակ, մտահոգիչ է ՀՀ կառավարության մոտեցումը՝ դիտարկել ԵԱՏՄ ընդհանուր էներգետիկ շուկայի ձևավորումը որպես առաջնահերթություն⁶⁰: Վերջին տասնամյակներին Ռուսաստանի էներգետիկ հարաբերությունները ԵԱՏՄ անդամ պետությունների հետ կարելի է նկարագրել որպես քաղաքական գործընկերությունից կախված գործոն: Ռուսաստանի հետ առավել «մոտ» և աջակցող պետությունները ստացել են էներգիայի համար ամենաարտոնյալ պայմանները (օրինակ՝ Բելառուսին տրված գազի և նավթի սուբսիդիաները 2011-2017 թթ. կազմել են Բելառուսի ՀՆԱ-ի մոտ 15%-ը)⁶¹: Հետևաբար, նույնպես ընդհանրապես հիմքեր չկան ենթադրելու, որ էներգիան որպես ուժի գործոն օգտագործելու Ռուսաստանի քաղաքականությունը կփոխվի ԵԱՏՄ միասնական շուկայի ձևավորմամբ: Ավելին, միասնական շուկայի ձևավորումը կարող է լեգիտիմացնել Ռուսաստանի մենաշնորհը և գազի շուկայում առաջարկվող սակագների քաղաքականությունը:

⁶⁰ «ՀՀ կառավարության որոշում, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»
⁶¹ Olga L. Garanina, 2021. "Perspectives of Common EAEU Oil and Gas Markets," Springer Books, in: Natalia A. Piskulova (ed.), The Economic Dimension of Eurasian Integration, chapter 0, pages 107-123, Springer

Բացի վերոնշյալ էներգետիկ հանասանելիության խնդիրներից, առկա են նաև համակարգային բացեր էներգետիկայի անվտանգության մյուս բաղադրիչի՝ էներգետիկ արդյունավետության տեսանկյունից: ՀՀ հաջորդող կառավարությունները դեռ 2004 թվականից ընդունել են էներգետիկ արդյունավետությանը վերաբերող ոլորտային ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր: Սույն աշխատության շրջանակում նպատակ չի հետապնդվում գնահատելու ընդունված ռազմավարությունների կատարողականի արդյունավետությունը, այլ՝ էներգետիկ անվտանգության տեսական հիմքից վերհանել համակարգային խնդիրներ և առաջարկել գործողություններ: 2022 թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրով նախատեսված են գործողություններ, որոնք, ըստ էության, ուղղված են Հայաստանի Հանրապետության էներգետիկ արդյունավետության և էներգետիկ հասանելիության մակարդակների բարձրացմանը: Սակայն, վերոնշյալ ծրագրում առկա է երկու համակարգային խնդիր՝ էներգախնայողության ոլորտում նախատեսվող գործողությունները 1) ամբողջական չեն և 2) նախատեսվող գործողությունների ֆինանսավորման աղբյուրները հիմնականում կախված են միջազգային դոնոր կազմակերպություններից: Գործողությունների ծրագրի կախվածությունը միջազգային դոնորներից իր հերթին առաջացնում է ծրագրի իրականացման անկախատեսելիություն, ինչպես նաև ըստ առկա ֆինանսավորման գործողությունների իրականացում, որը կարող է չհամապատասխանել ոլորտում ներկա իրավիճակի պահանջներին:

Էներգախնայողության և դրա քաղաքականության մշակման ու մշտադիտարկյալ համար առկա են կազմակերպական և կառավարչական խնդիրներ: Ոլորտի զարգացման պատասխանատվությունը պատվիրակված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) էներգետիկայի վարչության էներգաարդյունավետության և տեխնիկական նորմատիվների բաժնին, որը, ըստ էության, բավարար կարողություններ և վիճակագրական տվյալ չունի ամբողջ ոլորտի զարգացման համար: Մինչ ՏԿԵՆ-ի ձևավորումը՝ էներգախնայողության ոլորտը գտնվում էր անմիջապես էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի և փոխնախարարների վերահսկողության ներքո: Ուստի, բացի կարողությունների խնդրից, առկա է նաև քաղաքական հովանավորչության և քաղաքական բարձր ներկայացվածության խնդիր:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ոլորտի գերկախվածությունը ռուսական գազից և դրա համեմատաբար մատչելի գնից՝ առաջանում են նաև խնդիրներ էներգախնայողության և տեխնոլոգիաների զարգացման տեսանկյուններից: Եթե այլ պետություններ ստեղծում են խթաններ էներգախնայողության համար, ապա Հայաստանի Հանրապետության դեպքում և՛ գերկախվածությունը, և՛ գազի համեմատաբար ցածր գինը խթանների

քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից բացասական հետևանքներ ունի: Խնդիրն առավել արդիական է տրանսպորտի ոլորտում, որտեղ ոլորտի վառելիքի մոտ 60%-ը սեղմված բնական գազով է: Հետևաբար, էլեկտրամոբիլների կիրառման (որն այժմ միայն սահմանափակվում է ներկրվող հարկային արտոնություններով) խթանման կառավարության քաղաքականությունը առավել քան դժվար է դառնում՝ առաջացնելով հավելյալ ծախսեր արտոնությունների, սուբսիդիաների և էլեկտրամոբիլների ենթակառուցվածքների ներդրման տեսանկյունից: Մյուս կողմից պետությունները էական ներդրումներ են կատարում վերականգնվող էներգիայի և էներգախնայողության ոլորտներում, նպատակ ունենալով նվազեցնելու վերականգնվող էներգիայի արտադրական ծախսերը և բարձրացնելով օգտագործվող էներգիայի արդյունավետությունը: ՀՀ-ն շարունակելով լինել գերկախված Ռուսական գազից, նվազեցնում է էներգիայի ոլորտում առաջանից տեղեկատվական կարողությունների ձևավորման հնարավորությունը:

Էներգախնայողության տեսանկյունից առավել խոցելի են շենքերն ու շինությունները: Շինությունները սպառում են Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի 40%-ը և գազի 25%-ը⁶²: Շինարարական ոլորտում առկա են իրավական կարգավորումներ, որոնք պարտադրում են կառուցապատողներին կիրառել էներգախնայողության միջոցներ: Սակայն, դրանք չեն վերաբերում արդեն կառուցված շենքերին և շինություններին, ինչպես նաև դրանց մշտադիտարկումը նույնպես առաջացնում է արդյունավետության հարցեր:

Բնակելի շենքերի ջեռուցման ոլորտում նույնպես առկա են համակարգային խնդիրներ: Հաշվի առնելով ջեռուցման չափաբաժինը էներգիայի սպառման զամբյուղում՝ ակներև է, որ ոլորտը համակարգային կարգավորման կարիք ունի: Բնակելի տների և բնակելի թաղամասերի ջեռուցման կաթսաների ոլորտը իրավական կարգավորում չունի:

Ոլորտի զարգացման վերոնշյալ ծրագրում նախատեսված չեն դրույթներ, որոնք ուղղված կլինեն *1) կառուցված շենքերում կենտրոնական ջեռուցման համակարգերի վերափոխմանը, 2) կառուցված շենքերի էներգախնայողության բարձրացմանը, 3) նորակառույց շենքերում ու շինություններում էներգախնայողության ստանդարտների կիրառմանը և դրանց մշտադիտարկմանը (ISO 51001), 4) տրանսպորտի ոլորտում սեղմված հեղուկ գազից դեպի էլեկտրամոբիլներ անցնելու խթանմանը:*

Բացի էներգետիկ անվտանգության առկա իրավիճակի համակարգային խնդիրների վերհանումից և վերլուծությունից, նպատակահարմար է նաև ներկայացնել առկա իրողությունների հիման ոլորտի զարգացման ապագային կանխատեսումներ: Պետությունների էներգետիկ համակարգերի զարգացման սցենարների մշակման ընթացքում ամենաօգտագործված և ճշգրիտ գործիքներից է համարվում MARKAL

62 Armenia Energy Policy Review, International Energy Agency, 2022

մոդելավորման համակարգը⁶³: Այս մոդելը հանդիսանում է տեխնոլոգիապես հարուստ գործիք՝ էներգետիկ ոլորտի զարգացումը բազմաժամկետ կտրվածքով ներկայացնելու համար: TIMES հարթակի հնարավորությունները թույլ են տալիս ընդգրկել ամբողջ էներգետիկ համակարգը՝ սկսած ռեսուրսների արդյունահանումից մինչև վերջնական սպառման պահանջները (արտադրության ամբողջական ցիկլը), ինչպես նաև կիրառել նվազագույն ծախսերով զարգացման օպտիմալ ուղղությունը՝ ռեսուրսների օգտագործման և տեխնոլոգիաների իրականացման համար առավել ծախսարդյունավետ մոդել ընտրելու նպատակով: 2019 թ-ին ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում մշակվեց ՀՀ էներգետիկ համակարգի նվազագույն ծախսերով 2020-36 թթ. Ջարգացման պլանը, որի հիմքում հենց MARKAL-EFOM System (TIMES) մոդելն էր⁶⁴: Ստորև ներկայացվում է մոդելավորման հիմնական արդյունքները.

➤ *Այն փաստը, որ բոլոր հնարավոր սցենարներում արևային և հողմային տեխնոլոգիաները ընդգրկվել են մոդելի մեջ որպես նոր արտադրական հզորությունները նվազագույն ծախսերով զարգացնելու տարբերակ, ընդգծում է վերականգնվող տեխնոլոգիաների առավելագույն զարգացմանն ուղղված քաղաքականության և ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծման կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար: Դա կարևոր է ոչ միայն նվազագույն ծախսերով զարգացում ապահովելու համար, այլ նաև կախվածությունը ներկրվող էներգիայի աղբյուրներից հնարավորինս նվազեցնելու և Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը և մրցունակությունը բարձրացնելու համար:*

➤ *2036 թ. հնարավոր կլիմայի ունենալ 1500 ՄՎտ ցանցին միացած արևային և 500 ՄՎտ հողմային հզորություններ:*

➤ *ԱԷԿ-ի շահագործման ժամկետը 5 տարով և 10 տարով երկարացնելու սցենարները 1%-ով նվազեցնում են էներգետիկ համակարգի ընդհանուր ծախսերը 1.8%-ով ու 20.4%-ով նվազեցնում են բնական գազի ներկրման ծավալները: 2027 թ-ից հետո ՀԱԷԿ-ի նոր միջուկային էներգաբլոկով սցենարները (300 և 600 ՄՎտ) էապես բարձրացնում են ներդրումային ծախսերը՝ 4,1 և 5 մլրդ. ԱՄՆ դոլար համապատասխանաբար:*

➤ *Այս պարագայում, երբ Ռուսաստանից գազի ցածր գնի շնորհիվ նվազում են համակարգի ընդհանուր ծախսերը, շատ կարևոր է նշել, որ էժան գազի ավելացած սպառումը պահպանում է և խորացնում է Հայաստանի Հանրապետության կախվածությունը ներկրվող էներգիայի աղբյուրներից:*

➤ *Բնական գազի օգտագործման նվազումը Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում ցույց է տալիս, որ էլեկտրական ջեռուցման սարքերի*

63 Sovacool, Benjamin. 2011. The Routledge Handbook of Energy Security. New York: Routledge.

64 Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ, 2019, http://energinst.am/files/LCEDP%20Report_without%20Append_Arm_forSRIE.pdf

և էլեկտրական տրանսպորտի տարածման խրախուսումը կնպաստի տեղական ՎԷԱ ռեսուրսների օգտագործման բարձրացմանը, կնվազեցնի կախվածությունը ներկրվող էներգաաղբյուրներից (7,6%-ով) և կամրապնդի Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը:

2.3 Էներգետիկ անվտանգության ոլորտի զարգացման հիմնական գործողությունները

Ստորև Աղյուսակ 4-ում ներկայացվում են առաջնային գործողությունները՝ ըստ ուղղությունների՝

Աղյուսակ 4. ՀՀ էներգետիկ անվտանգության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները և առաջնային գործողությունները

| Ուղղություն/չափանիշ | Գործողություն |
|------------------------------|---|
| Հասանելիություն | <ol style="list-style-type: none"> 1. ԱԷԿ շահագործման ժամկետի 10 տարով երկարաձգում 2. 2027թ-ից հետո ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցում 3. Իրան-Վրաստան էլեկտրացանցերի սինխրոնիզացում և էլեկտրաէներգիայի առևտրի ծավալների աճ 4. Իրան-Հայաստան գազի մատակարարման ծավալների աճ 5. Մինչև 2037թ. 1500 ՄՎտ ցանցին միացած արևային և 500 ՄՎտ հողմային կայանների կառուցում 6. Գազի պահեստ-կայանների կառուցում |
| Մատչելիություն | <ol style="list-style-type: none"> 1. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից պարտավորեցնել, որ էլեկտրական ցանցերում ներդրումները կապվեն վերջնական օգտատերին մատուցվող ծառայության որակի բարելավման հետ: |
| Էներգետիկ արդյունավետություն | <ol style="list-style-type: none"> 1. Էներգախնայողության ոլորտի քաղաքական ներկայացվածության աստիճանի բարձրացում 2. Նորակառույց շենքերի ու շինությունների համար միջազգային (ISO51001) կամ եվրոպական ստանդարտների (EU Directive on Energy Performance Indicators in Buildings) պարտավորեցում և մշտադիտարկում |

| | |
|---------------|--|
| | <p>3. Շենքերում և շինություններում ջեռուցման համակարգերի ոլորտի իրավակարգավորում, նորակառույց շենքերում կենտրոնական ջեռուցման համակարգերի և էներգախնայողության կարգավորումների կիրառում և մշտադիտարկում, արդեն կառուցված շենքերում կենտրոնական ջեռուցման համակարգերի անցում</p> <p>4. Տրանսպորտի ոլորտում գազից գերակախվածության գնահատում, գազից դեպի էլեկտրամոբիլների խթանման համապարփակ քաղաքականության մշակում</p> |
| Կայունություն | <p>1. Էներգիայի ներկրման/արտադրության կշռում արևային և հողմային էներգիայի տեսակարար կշռի բարձրացում</p> <p>2. Էներգետիկայի հետազոտության, զարգացման և նորարարության ռազմավարության մշակում</p> |

3. Ազգային անվտանգության ռազմավարության արդյունավետ կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգերը

Գործող Ազգային անվտանգության ռազմավարությունը (այսուհետ՝ ԱԱՌ) հավանության է արժանացել 2020թ. օգոստոսի Անվտանգության խորհրդի նիստում: Հարկ է նշել, 2020թ. ԱԱՌ-ն որպես իրավական ակտ չի ընդունվել/հաստատվել որևէ պետական մարմնի կողմից, միջդեռ 2007թ. ԱԱՌ-ն հաստատվել է ՀՀ նախագահի հրամանագրով: Ըստ էության, ԱԱՌ-ն կառավարության համար պետք է լինի առաջնային ռազմավարական բնույթի փաստաթուղթ, որովհետև ցանկացած կառավարության առաջնահերթ խնդիրն է ապահովել պետության և բնակչության անվտանգությունը: Հետևաբար, ԱԱՌ-ն պետք է Կառավարության ծրագրից ավելի բարձր կարգավիճակ ունենա և ոլորտային ռազմավարությունները պետք է բխեն դրանից: Մինչդեռ, ներկայում պատկերն այլ է: Օրինակ՝ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը՝ ընդունված կառավարության որոշմամբ, ըստ էության, ավելի բարձր իրավական կարգավիճակ ունի, քան ԱԱՌ-ն:

Անվտանգության խորհրդի նիստում հավանության արժանացած ԱԱՌ-ն ներքին իրավական ակտ է, որը ստորադասվում է օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին⁶⁵: Առհասարակ, ներքին իրավական ակտերը

65 Arlis. 2018. ՀՀ օրենքը՝ Նորմատիվ իրավական ակտերի մասին. Մարտ 21. Accessed Մարտ 26, 2023. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120733>.

նախատեսված են աշխատանքային կամ վարչական հարաբերությունների շրջանակներում վարքագծի կանոններ սահմանելու համար: Իսկ ԱԱՌ-ն ուղղված է կարգավորելու հարաբերությունների այնպիսի խումբ և լայն շրջանակ, որը չի կարող կարգավորվել ներքին իրավական ակտի մակարդակում: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ 2020 թ. ԱԱՌ-ն ընդունվել է օրենքի խախտմամբ, քանի որ այն, ըստ էության և բովանդակության, չի կարող լինել ներքին իրավական ակտ: Բացի այդ, ԱԱՌ-ն, ընդունվելով որպես ներքին իրավական ակտ, ապրիորի ձևառոտ է դրանում տեղ գտած դրույթների իրականացումը և մշտադիտարկումը:

Անվտանգության խորհրդի կողմից ԱԱՆ-ին հավանության արժանացնելու իրավակիրառ պրակտիկան առաջացնում է նաև խնդիրներ անվտանգության ոլորտի հաշվետվողականության և քաղաքական ընդդիմության ներգրավվածության տեսանկյուններից: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը (այդ թվում՝ ներքին իրավական ակտերը) կարող են դրվել հանրային քննարկման, սակայն մշակող մարմնի հայեցողությամբ: Հաշվի առնելով Ազգային անվտանգության ռազմավարության նշանակությունը պետության և հասարակության համար՝ դրա մշակման և ընդունման գործընթացները պետք է ապահովեն օրենսդրորեն պարտավորեցնող հասարակության բովանդակային ընդգրկվածության բարձր մակարդակ (2020թ. ԱԱՌ-ն չի ներկայացվել հանրային քննարկման): Մյուս կողմից, ԱԱՌ-ն լինելով պետության համար կարևորագույն ռազմավարական փաստաթղթերից (ինչպես օրինակ ամենամյա Պետական բյուջի մասին օրենքները), դրա մշակումը, մշտադիտարկումը և հաշվետվողականությունը պետք է ներգրավվի և վերահսկվի քաղաքական ընդդիմությունը՝ բարձրագույն ներկայացուցչական մակարդակում՝ Ազգային ժողովում:

Հետևաբար, պետք է մշակի օրենքի նախագիծ, որն օրենսդրորեն կկարգավորի ԱԱՌ մշակման, ընդունման, իրականացման, վերահսկման և մշտադիտարկման կարգը՝ ապահովելով հասարակության ներգրավման լայն մակարդակ, ինչպես նաև հստակ արձանագրելով ԱԱՌ կարևորությունը և վերադասությունը պետության ռազմավարական փաստաթղթերի հիերարխիայում: Առաջարկվում է օրենքով սահմանել, որ 1) ԱԱՌ-ն ընդունում է Ազգային ժողովը, ինչպես նաև 2) Ազգային ժողովին վերապահել ԱԱՌ-ի վերահսկումն ու հաշվետվողականության ապահովումը: 3) պարտավորեցնել ՀՀ կառավարության ԱԱՌ-ի իրականացման վերաբերյալ ամենամյա զեկույցներով հանդես գալ Ազգային ժողովում, իսկ ԱԱՌ-ի ոչ հանրային մասերի հաշվետվողականության համար սահմանել հատուկ ընթացակարգեր (ինչպես օրինակ՝ Պետական բյուջեի կատարողականի հաշվետվությունների համար): **Այս պարագայում, օրենսդրորեն կկարգավորվի ԱԱՌ ընդունման տեղը, կարգը և հաշվետվողականությունը, կապահովվի քաղաքական ընդդիմության ներգրավվածության և վերահսկման բավարար մակարդակ, ինչպես նաև ԱԱՌ**

կրնորունվի իր բնույթին համապատասխան և հնարավոր առավել վերադաս իրավական ակտով:

4. Ռիսկերի, մարտահրավերների և սպառնալիքների եզրույթների տարանջատում

Ազգային անվտանգության ռիսկ

Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը ռիսկը սահմանում է որպես *անորոշությունների ազդեցությունը կազմակերպությունների նպատակների վրա*⁶⁶: Ռիսկը բաղկացած է իրադարձության լինելու հնարավորությունից և դրա հետևանքից, կամ ռիսկ = առաջացման հնարավորություն x ռիսկային իրադարձությունից առաջացող հետևանք: Հետևաբար, ՀՀ համատեքստում ռիսկային իրադարձությունը կարող ենք սահմանել որպես *իրադարձություն, որն ունի առաջացման որոշակի հնարավորություն և հղի է այնպիսի հետևանքներով, որոնք արտահայտվում են մարդկային կյանքի կորստով, մարդու առողջության վրա բացասական ազդեցությամբ, նյութական վնասով, կառավարման և ծառայությունների մատուցման խափանմամբ, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությամբ և/կամ սոցիալական բնականոն կյանքի խաթարմամբ*:

Ազգային անվտանգության սպառնալիք

2007թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը սպառնալիքները սահմանում է հետևյալ կերպ. «Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են՝ պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործությունը: Այդպիսի սպառնալիքներ կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) և երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ)»: Իսկ 2020 թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ սահմանումները բացակայում են:

Հարկ է նշել, որ 2007 թ. սահմանումը չի ներառում տեխնաձին ռիսկերը: Այն սահմանում է «ազգային անվտանգության դեմ ուղղված...»՝ ենթադրելով գործակալություն և մտադրություն: Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը (ISO) սահմանում է սպառնալիքը որպես «հնարավոր իրադարձություն: Երբ սպառնալիքը դառնում է իրականություն, այն անցանկալի հետևանքներ է առաջացնում տվյալ կազմակերպության կամ համակարգի համար»: Համաձայն մասնագիտական գրականության՝ «ազգային անվտանգության սպառնալիք» եզրույթը Սառը պատերազմի ժամանակ պետությունների կողմից ընկալվել է հիմնականում երկու համատեքստում՝ քաղաքական և գաղափարական: Սովետական միության փլուզումից հետո և պատերազմների նոր տեսակների առաջացումներով պայմանավորված՝ «սպառնալիք» եզրույթը նոր իմաստավորում է

⁶⁶ International Organization for Standardization. 2018. The new ISO 31000 keeps risk management simple. London, February 15.

ստացել, սկսելով մեկնաբանվել ավելի լայն՝ ներառելով ոչ միայն պետական ինստիտուտները, այլև մարդկանց, քաղաքացիական հասարակությունը, բնապահպանությունը, կլիմայի փոփոխությունը և այլն: 1990-ականներից «Սպառնալիքների» ավելի լայն մեկնաբանումը սկսեց տեղ գտնել պետությունների անվտանգային և պաշտպանական հայեցակարգային փաստաթղթերում: Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ սպառնալիքների սահմանման համար անհրաժեշտ է երկու բաղադրիչ՝ իրադարձություն և կազմակերպության/պետության նպատակներ, որոնց վրա էլ կազդի իրադարձությունը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ կարող ենք սահմանել ազգային անվտանգության սպառնալիքները որպես **«հնարավոր իրադարձություններ, որոնք կարող են բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և ՀՀ ռազմավարական առաջնահերթությունների ու նպատակների վրա»:**

Ազգային անվտանգության մարտահրավերներ

«Մարտահրավեր» եզրույթը հաճախ օգտագործվում է անվտանգային և գլոբալ խնդիրների համատեքստում, սակայն մասնագիտական գրականության մեջ բացակայում է համընդհանուր սահմանում և հաճախ փոփոխաբար կիրառվում է «սպառնալիք» եզրույթի հետ: Սառը պատերազմից հետո անվտանգության ավելի լայն մեկնաբանմամբ պայմանավորված՝ «ազգային անվտանգության մարտահրավերները» պետությունների կողմից սկսվեցին կիրառվել ավելի լայն՝ ներառելով ահաբեկչությունը, շրջակա միջավայրի դեգրադացիան, անդրսահմանային հանցավորությունը, փախստականների աճը, կիբեռհանցավորությունների աճը: Ընդհանուր առմամբ, անվտանգային մարտահրավերները վերաբերում են ավելի երկարաժամկետ և փափուկ ուժին առնչվող խնդիրներին: Համաձայն մասնագիտական գրականության վերլուծության՝ մարտահրավերները, ի տարբերություն սպառնալիքների, միտումներ են, ոչ թե հստակ իրադարձություններ: Բացի այդ, մարտահրավերները ներառում են նաև հնարավորություններ, հետևաբար, միանաշական չէ դրանց բացասական ազդեցությունը ազգային անվտանգության կամ ռազմավարական առաջնահերթությունների վրա:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ ազգային անվտանգության մարտահրավերները կարող ենք սահմանել որպես **«միտումներ, որոնք միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կարող են հետևանքներ ունենալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և ՀՀ ռազմավարական առաջնահերթությունների ու նպատակների վրա»:**

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

- **Մարդու դիմադրողունակություն** - անհատների կարողությունը հարմարվելու, վերականգնվելու և բարգավաճելու դժվարությունների, տրավմայի կամ նշանակալի մարտահրավերների դեպքում: Դա սթրեսին դիմակայելու ու գործունակություն պահպանելու կարողությունն է: Մարդկային դիմադրողունակությունը հաստատուն հատկանիշ չէ, այլ ավելի շուտ դինամիկ գործընթաց, որի վրա ազդում են տարբեր գործոններ, ինչպիսիք են միջավայրը, դաստիարակությունը և անձնական փորձը: Այն ներառում է հոգեբանական, զգացմունքային և սոցիալական գործոնների համակցություն, որոնք նպաստում են անհատի կողմնորոշվելու և դժվարությունները հաղթահարելու կարողությանը:

- **Մշակութային և քաղաքական ինքնություն** - մարդու ինքնարժեքային և որոշակի խմբի կամ համայնքի հետ կապի կարևոր բաղադրիչներն են: Մշակութային ինքնություն. մշակութային ինքնությունը վերաբերում է որոշակի մշակույթի կամ էթնիկ խմբի հետ պատկանելության և նույնականացման զգացողությանը: Այն ներառում է ընդհանուր արժեքները, հավատալիքները, սովորույթները, ավանդույթները, լեզուն և ժառանգությունը, որոնք ձևավորում են անհատի աշխարհայացքը և ինքնորոշումը: Քաղաքական ինքնություն. քաղաքական ինքնությունը վերաբերում է անհատի պատկանելությանը որոշակի քաղաքական գաղափարախոսության, կուսակցության կամ շարժման հետ: Այն արտացոլում է անձի համոզմունքները, արժեքները և վերաբերմունքը կառավարման, սոցիալական խնդիրների և հանրային քաղաքականության նկատմամբ:

- **Ազգային գաղափարախոսություն** - համոզմունքների, արժեքների, սկզբունքների և իդեալների կանոնակարգված համախումբը, որը սահմանում են ազգի հիմնական ինքնությունը և նպատակը: Այն ներկայացնում է ընդհանուր տեսլականն այն մասին, թե ինչի համար է հանդես գալիս ազգը, նրա նպատակները և սկզբունքները, որոնք առաջնորդում են կառավարման գործընթացը, քաղաքականությունը և հասարակական նորմերը:

- **Հիբրիդային հարվածներ** - կոնֆլիկտի կամ ագրեսիայի ձև, որը համատեղում է սովորական ռազմական գործողությունները ոչ ավանդական մեթոդների հետ, ինչպիսիք են կիբեռն հարձակումները, ապատեղեկատվական արշավները, տնտեսական ճնշումը և պրոքսի ռազմական ուժը: Այն ներառում է ինչպես սովորական, այնպես էլ ոչ ավանդական մարտավարությունների միաձուլում, որոնք հաճախ կիրառվում են միաժամանակ կամ համակարգված կերպով՝ ռազմավարական նպատակներին հասնելու համար:⁶⁷

⁶⁷ Erik Reichborn-Kjennerud, Patrick Cullen, 2016, What is Hybrid Warfare?, <https://www.jstor.org/stable/resrep07978>

- **Իշխանության իրավահաջորդության գիծ** - Պետական պաշտոնիայի մահվան կամ անգործունակության պարագայում վերջինիս պաշտոնի ու պարտականությունների փոխանցման գործընթացը ենթակա պաշտոնիային, որը թույլ է տալիս ապահովել պետական կառավարման անխափանությունը: Նշվածի դասագրքային օրինակ է համարվում ԱՄՆ նախագահի պաշտոնի իրավահաջորդության գիծը՝ նախագահ, փոխնախագահ, կոնգրեսի խոսնակ, պետքարտուղար և այլն:

- **Էներգետիկ անվտանգություն** - բոլոր սպառողների համար հասանելի և մատչելի էներգետիկ արտադրանքի ապահովման գործողությունների համախումբ, որն նպաստում է երկրի էներգետիկ արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև չի սահմանափակում պետության տնտեսական և սոցիալական զարգացումը:

- **Կարևոր տեղեկատվական ենթակառուցվածք** - տեղեկատվության ձևավորման, վերամշակման, փոխանցման, կիրառման և պահպանման տեխնիկական միջոցների ու համակարգերի ամբողջություն, որը կենսականորեն կարևոր է պետության և հասարակության համար, և որի վնասումը, խափանումը կամ ոչնչացումը վտանգավոր կամ աղետալի հետևանքներ կարող է ունենալ ազգային անվտանգության, պետական կառավարման, հանրային կարգի և առողջության, տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության վրա:

- **Կիբեռանվտանգություն** - իբեռտիրոյթում ընդունելի ռիսկի մակարդակի ապահովման գործընթաց, որը ներառում է անվտանգության սկզբունքներ, քաղաքականություն, անվտանգության երաշխիքներ, մեթոդական ուղեցույցներ, ռիսկերի կառավարման մոտեցումներ, գործողություններ, մասնագիտական պատրաստվածություն, ապահովագրման միջոցներ և տեխնոլոգիաներ կամ դրանց ամբողջություն:

- **Կիբեռսպառնալիք** - կիբեռտիրոյթում հնարավոր իրադարձություն՝ կազմակերպության համար անցանկալի հետևանքներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Որդեգրել ոչ բլոկային բազմավեկտորության քաղաքական կուրս և դրանից բխեցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայտարարված և խորքային ռազմավարությունները:

- Մշակել ՀՀ պետության մասնագիտացման հայեցակարգ՝ հիմնված ազգային դեմոկրատական կորպորատիվ մեխանիզմների վրա:

- Հայեցակարգային վերանայման ենթարկել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը՝ հենվելով ոչ բլոկային բազմավեկտորության քաղաքականության, Պետության մասնագիտացման հայեցակարգի և Ազգային անվտանգության հայտարարված դրույթների և խորքային ռազմավարություն առանձնահատկությունների վրա:

- Մշակել Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերվելուն միտված առանձին խորքային ռազմավարություն, կամ այն ներառել ՀՀ ազգային անվտանգության համապարփակ խորքային ռազմավարության մեջ:

- Ոչ բլոկային կարգավիճակը դիտարկել որպես միջոց՝ համակարգային սահմանափակումները շրջանցելու ճանապարհով ռազմավարական գործընկերների փոխշահավետ ցանց ստեղծելու, փոքր պետությունների հետ փոխգործակցությամբ քաղաքական ուժ և ազդեցություն պրոյեկտելու և մեծերի ու փոքրերի առանձնահատկություններից բխող մոտեցումներում Հայաստանի Հանրապետության պետական շահը սպասարկելու, արտաքին քաղաքականության տեսանկյունից ապահովելու և տարածաշրջանային դերակատար դառնալու համար:

- Ռուսաստանի Դաշնության հետ փոխհարաբերություններում հայեցակարգային հենքի վրա դնել փոխադարձության սկզբունքը՝ և՛ երկկողմանիության, և՛ բազմակողմանիության գործընթացներում:

- Ստեղծել երկրի, օրենսդիր և գործադիր իշխանության ղեկավարների մահվան կամ անգործունեության պարագայում պաշտոնի երաշխավորված փոխանցելիության հստակ ձևակերպված ու օրենքով սահմանված մեխանիզմներ:

- Ստեղծել կարողունակ և ուժեղ ընդդիմության ձևավորման համար անհրաժեշտ սահմանադրական ու օրենսդրական երաշխիքներ: Որպես հիմնական մեխանիզմ դիտարկել երկկուսակցական համակարգի ներդրման գաղափարը՝ միտված ընդդիմադիր ուժերի կոնսոլիդացմանն ու հզոր երկրորդ բևեռի (կարողունակ ընդդիմության) ձևավորմանը:

- Հենվելով միջազգային առաջադեմ փորձի վրա՝ համակարգային նպաստավոր պայմաններ ստեղծել քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ տարածքային պաշտպանության ուժերի ձևավորման ու կատարելագործման, քաղաքացիների ինքնապաշտպանական

կարողությունների զարգացման և պետության ինքնապաշտպանության համար հասարակության արագ կազմակերպման կարողությունների ձևավորման աշխատանքներում:

- Մշակել ԵԱՏՄ անդամակցության կարգավիճակի վերանայման ռազմավարություն՝ զուգահեռաբար բացառելով ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներում Հայաստանի Հանրապետության հետագա ներգրավվածության խորացումը:

- Բնակչության կարիքները հնարավորինս երկար բավարարելու նպատակով առաջիկա 10 տարիների ընթացքում ձևավորել ռազմավարական պաշարներ հավաքագրելու ու պահեստավորելու կարողություններ՝ պարենի, հումքի, էներգետիկ ռեսուրսների, դեղորայքի հարցերում:

- Հիմնական ենթակառուցվածքների ստեղծումը, զարգացումը, պաշտպանությունը, դրանց բազմազանացումը և կառավարելիության մակարդակի բարձրացումը դիտարկել որպես ազգային դիմադրողունակության կազմակերպման համար առկա բացարձակ առաջնահերթություն:

- Էականորեն ավելացնել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հոսող և ՀՀ սահմանների երկայնքով հոսող գետերից ու այլ հոսող ջրավազաններից ջրառն ու ջրի ամբարումը: Այդ նպատակի իրագործման նպատակով վերականգնվող և կանաչ էներգետիկ աղբյուրների զարգացումը կապել փոխլրացնող ու կայունություն ապահովող հիբրիդային և/կամ պաշարավորում ապահավող համալիրների հետ:

- Սևանա լճի մակարդակը տարեկան 21 սմ-ով բարձրացնելու հանձնառությանը հավատարիմ մնալով հաշվի առնել կլիմայական պայմանների վատթարացումը և ըստ անհրաժեշտության զուգահեռ ավելացնել այդ հանձնառությունը: Մեկնարկել լճի ֆիզիկական, քիմիական ու կենսաբանական չափորշիչների բարելավման ու բնական էկոհամակարգի վերականգնման լայնամասշտաբ աշխատանքներ:

- Խմելու և ոռոգման ջրերի ռեսուրսների կորստի առկա մակարդակը նվազեցնելու նպատակով իրականացնել կապիտալ միջոցառումներ՝ մայրական ջրատարների վերանորոգումներ, հողային հունով հոսող բաց ջրատարների փոխարինում, փակ ջրատարներով մատակարարվող կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման խրախուսում, գնային կարգավորող քաղաքականություն, կոռուպցիոն ռիսկերի ու չարաշահումների դեմ հետևողական ու անզիջում պայքար:

- Զարգացնել ռազմավարական մոտեցում տեղեկատվական և կիբեռ անվտանգության ոլորտների զարգացման համար: Մշակել և ընդունել կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների մասին օրենք: Ստեղծել կիբեռ պատահարների արձագանքման թիմեր և ձևավորել ՀՀ ազգային կիբեռանվտանգության կենտրոն: Բարձրացնել հանրության իրազեկվածության

մակարդակը: Նախակրթական և հանրակրթական ծրագրերում ներառել կիբեռ տիսկերի և հիգիենայի վերաբերյալ դասընթացներ:

- Էական ջանքեր գործադրել ՀՀ-ում էներգիայի հասանելիության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝ մինչև 2037թ. կառուցել 1500 ՄՎտ ցանցին միացած արևային և 500 ՄՎտ հողմային կայաններ, ԱԷԿ-ի շահագործման ժամկետի 10 տարով երկարաձգում, իսկ 2027թ-ից ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցում: Արտաքին քաղաքական միջավայրի բազմազանեցման տեսանկյունից ապահովել Իրան-Հայաստան գազի մատակարարման ծավալների աճ: Ապահովել էներգախնայողության ոլորտում պետական ներդրումներ, մասնավորապես շենքերի և շինությունների էներգախնայողության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

- Մշակել օրենք, որ կսահմանի Ազգային անվտանգության ռազմավարության ընդունող մարմինը, մշակման, վերահսկման և մշտադիտարկման ընթացակարգերը: Հաշվի առնելով ԱԱՌ-ի կարևորությունը, առաջարկվում է ԱԱՌ-ն ընդունել բարձրագույն քաղաքական ներգրվվածություն ունեցող մարմնի՝ Ազգային ժողովի կողմից: Միաժամանակ, պարտավորեցնել ՀՀ կառավարությանը ԱԱՌ-ի կատարողականի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել Ազգային ժողով:

